

ISSN 1829-1155

Հիմնադիր՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳԻՐԱԿԱՆ  
ԴԱՏԱՐԱՆ

**ՍԱՀՄԱՆԱԳԻՐԱԿԱՆ  
ԴԱՏԱՐԱՆ**

Խմբագրական  
խորհուրդ՝

Գագիկ Նարոյթյունյան  
Արմեն Նարոյթյունյան  
Վահե Սյրեխանյան  
Վորդյա Նովհաննիսյան  
Վալերի Գողոպյան  
Անուշան Նսկոբյան

Գլխավոր խմբագիր՝  
Գոհար Ռշտունի

Խմբագրության հասցեն՝  
Երևան, Բաղրամյան 10  
Հեռախոս՝ 58-81-71

**ՏԵՂԵԿԱԳԻՐ**

**4(57)  
2010**

© 2010 ՍԱՀՄԱՆԱԳԻՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (852-870)

- \* ՍԳՈ-852. ԶԱՂԱՔԱՑԻ ԳԱԳԻԿ ԶԱՆԳԱՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐԶԻ  
394-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՍԱՍԻ 2-ՐԴ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ..... 5
- \* ՍԳՈ-853. 2009 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-ԻՆ ԴԱՄԱՍԿՈՍՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱԲԱԿԱՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ  
ԱՆՁՆԱԳՐԵՐ ՈՒՆԵՑՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄՈՒՏՔԻ ԱՐՏՈՆԱԳԻՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՊԱՀԱՆՋԻ՝  
ՎԵՐԱՑՄԱՆ ՍԱՍԻՆ ՀԱՍՆՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ..... 13
- \* ՍԳՈ-854. 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-ԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ  
ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒԺԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳԱՂՏՆԻ  
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՀԻՄԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՍԻՆ  
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ..... 17
- \* ՍԳՈ-855. 2009 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-ԻՆ ԿԱՀԻՐԵՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵԳԻՊՏՈՍԻ ԱՐԱԲԱԿԱՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ, ԾՈՒԱՅՈՂԱԿԱՆ  
ԿԱՄ ՀԱՏՈՒԿ ԱՆՁՆԱԳԻՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՄՈՒՏՔԻ ԱՐՏՈՆԱԳԻՐ ՍՏԱՆԱԼՈՒ  
ՊԱՀԱՆՋԻՑ ԵՐԿԿՈՂՄ ԱԶՍՄԱՆ ՍԱՍԻՆ ՀԱՍՆՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ..... 20
- \* ՍԳՈ-856. 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-ԻՆ ԴՈՒՇԵՆԵՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ԱՆԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԱՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՄԻԳՐԱՑԻՈՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՍԱՍԻՆ  
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ..... 24
- \* ՍԳՈ-857. 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 3-ԻՆ ԲՐՅՈՒՄԵԼՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԵՆԻԼՅՈՒՍԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
(ԲԵԼԳԻԱՅԻ ԹՎԱՎՈՐՈՒԹՅԱՆ, ԼՅՈՒԲՍԵՄԲՈՒՐԳԻ ՄԵԾ ԴՔՍՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ ԹՎԱՎՈՐՈՒԹՅԱՆ) ՄԻՋԵՎ ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ԲՆԱԿՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՍՏԱՏՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՍԱՍԻՆ ՀԱՍՆՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԵՎ ԿԻՐԱՍՄԱՆ  
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ..... 27
- \* ՍԳՈ-858. 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-ԻՆ ԲՈՆՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ  
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ..... 30
- \* ՍԳՈ-859. 2008 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-ԻՆ ԶԻՇՆԵՎՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԱՆԿԱՆ  
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԱՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԱՇԽԱՏՈՂ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ  
ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՍԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ..... 33

* ՍԴՈ-860. 2009 թվականի սեպտեմբերի 15-ին ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ /ՀԱՅԱՍՏԱՆ ԲՅՖ ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ԾԱՆԱԳՐԱՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ/ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	36
* ՍԴՈ-861. 2009 թվականի հոկտեմբերի 12-ին ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ /ՀԱՏՈՒԿ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ/ ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ԾԱՆԱԳՐԱՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ-ԾՐԱԳԻՐ 1/ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	41
* ՍԴՈ-862. 2007 թվականի հոկտեմբերի 5-ին ԳՈՒՇՈՒՆԲԵՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԱՓՇՏԱԿՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՋԱՐՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԱԳԱՐՁԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԱՆԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԱԿՏԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	46
* ՍԴՈ-863. 2005 թվականի նոյեմբերի 25-ին ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՓՇՏԱԿՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՋԱՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԱԳԱՐՁԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԱՆԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԱԿՏԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ (ԿԻՑ ԱՌԱՐԿՈՒԹՅԱՄԲ) ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	50
* ՍԴՈ-864. «ԻՆՖՈՐՄԱՑԻՅԻ ԱՉԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՊՐՔԻ 151 ԵՎ 152-ՐԴ ՀՈԳՎԱԾՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	54
* ՍԴՈ-865. ԲԱՐԱԲԱՅԻՆ ՍԱՄՎԵԼ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՁԻՆԾԱՆՈՒՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 6 ԵՎ 8-ՐԴ ՀՈԳՎԱԾՆԵՐԻ, «ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԾՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 9-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ ԵՐՐՈՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	64
* ՍԴՈ-866. «ՄԵԼՏԵՔՍ» ՍՊԸ-Ի ԵՎ ԲԱՐԱԲԱՅԻՆՆԵՐ ՍԵՐԻՆԵ ՖԼՁՅԱՆԻ, ԻՐԻՆԱ ՕԳԱՆԵՉՈՎԱՅԻ, ԱՆՆԱ ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆԻ ԵՎ ԱԳՆԵՍԱ ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԲԱՐԱԲԱՅԻՆԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՊՐՔԻ 204.28-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ .....	75
* ՍԴՈ-867. 2007 թվականի նոյեմբերի 8-ին ԴԱՄԱՍԿՈՍՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՐԻԱՅԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՄԱՋՍԱՅԻՆ ԳՈՐԾԵՐՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈԽՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	82
* ՍԴՈ-868. 1995 թվականի սեպտեմբերի 29-ին ՄՈՆՐԵԱԼՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՄԻՋԱՉԳԱՅԻՆ ԲԱՐԱԲԱՅԻՆԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	86

* ՍԳՈ-869. 1998 թվականի Հոկտեմբերի 1-ին Մոնրեալում ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «Մեջլիսներ, քաղաքացիական և Վիճակագրության մասին» Կոնվենցիաների Փոփոխությունները վերաբերող Արձանագրությունը Սեջ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	89
* ՍԳՈ-870. ՌՈՔԵՐՏ ՄԵՂԵՐԴԻՉ-ՂԱՐԱՍՍԵՄՅԱՆԻ ԴԻՍՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ քաղաքացիական դատավարությունը Օրենսգրքի 221-րդ Հոդվածի 1-ին Մասի 2-րդ Կետի Եվ 28-րդ Հոդվածի 4-րդ Մասի՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ .....	91



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՅԻ ԳԱԳԻԿ ՉԱՆԳԼՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 394-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ  
1-ԻՆ ՄԱՍԻ 2-ՐԴ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**19 հունվարի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Մ. Թովուզյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի (զեկուցող),

համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Գագիկ Չանգլյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Գ. Չանգլյանի՝ 04.09.2009թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց .**

1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հու-

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(57)2010  
5

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

լիսի 1-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

Օրենսգրքի՝ վերաքննիչ դատարանի լիազորությունները սահմանող 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետն ամրագրում է վերաքննիչ դատարանի հետեւյալ լիազորությունը. «1. Գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերաքննության արդյունքում վերաքննիչ դատարանը՝ ...2) ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վերաքննիչ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը: Բեկանված մասով կայացվում է գործն ըստ էության լուծող դատական ակտ, կամ գործն ուղարկվում է համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը: Չբեկանված մասով դատական ակտը մտնում է օրինական ուժի մեջ»:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին: Դիմողը Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի 28.11.2007թ. դատավճռով մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին եւ 34-105 հոդվածի 1-ին մասերով՝ դատապարտվելով ազատազրկման՝ 7 տարի ժամկետով: Դատավճիռը բողոքարկվել է ինչպես դիմողի, այնպես էլ տուժողի իրավահաջորդի եւ դատախազի կողմից: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն իր՝ 28.07.2008թ. դատավճռով դիմողի վերաքննիչ բողոքը մերժել է, միաժամանակ բավարարել դատախազի եւ տուժողի իրավահաջորդի վերաքննիչ բողոքները: Վերաքննիչ դատարանը, մասնակիորեն բեկանելով առաջին ատյանի դատարանի դատավճիռը, դիմողին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով եւ 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով ու դատապարտել ազատազրկման 13 տարի ժամկետով:

Դիմողի կողմից վերաքննիչ դատարանի դատավճիռը բողոքարկվել է ՀՀ վճռաբեկ դատարան: Վերջինս իր՝ 2009թ. մարտի 6-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձրել է:

3. Դիմողը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում ամրագրված դրույթը հակասում է ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դրույթին: Ըստ դիմողի՝ այդ հակասությունը դրսեւորվում է նրանում, որ եթե վերաքննիչ դատարանը կիրառելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով իրեն վերապահված լիազորությունը՝ բեկանում է առաջին ատյանի դատարանի դատավճիռը եւ կայացնում առաջին ատյանի դատարանի դատավճռից էապես տարբերվող նոր դատավճիռ, ապա նման իրավիճակում անձը գրկվում է իր նկատմամբ կայացված դատավճիռը բողոքարկելու՝ ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված իրավունքն իրացնելու հնարա-

վորությունից: Ըստ դիմողի՝ նման իրավիճակի հակասահմանադրականությունն առավել ակնհայտ է, երբ անձն առաջին ատյանի դատարանի կողմից արդարացվել է, սակայն մեղավոր է ճանաչվել վերաքննիչ դատարանի դատավճռով:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկների դեմ, գտնում է, որ վերաքննիչ դատարանի՝ վիճարկվող լիազորությունն ամբողջովին բխում է ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված դրույթի բովանդակությունից: Ավելին, այդ լիազորության իրականացումն ուղղված է Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներով սահմանված դատական պաշտպանության եւ արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրացման երաշխիքների, դատական գործընթացի լիարժեքության ու դատական իշխանության բնականոն գործունեության ապահովմանը:

5. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված՝ անձի՝ իր նկատմամբ կայացված դատավճռի՝ օրենքով սահմանված կարգով վերադաս դատարանի կողմից վերանայման իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտել ՀՀ Սահմանադրության 6-րդ գլխում սահմանված՝ ՀՀ դատական համակարգի կառուցվածքի, այդ համակարգում յուրաքանչյուր դատական ատյանի սահմանադրաիրավական կարգավիճակի եւ գործառույթների, ինչպես նաեւ նշված իրավունքի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների համատեքստում:

Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 7-րդ արձանագրության՝ քրեական գործերով բողոքարկման իրավունքն ամրագրող 2-րդ հոդվածով Կոնվենցիայի մասնակից պետությունները, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունը, պարտավորություն են ստանձնել հանցագործություն կատարելու համար դատարանի կողմից դատապարտված յուրաքանչյուր անձի համար երաշխավորել **դատապարտումը կամ նշանակված պատիժը** վերադաս դատական ատյանի կողմից վերանայելու հնարավորություն: «Դատապարտումը կամ նշանակված պատիժը» ձեւակերպումը նշանակում է, որ նշված կոնվենցիոն դրույթը չի պարտավորեցնում երաշխավորել միաժամանակ եւ՝ դատապարտման, եւ՝ նշանակված պատժի վերանայման հնարավորություն: Այսինքն՝ եթե անձը մեղավոր է ճանաչվել առաջադրված մեղադրանքով, ապա վերանայման իրավունքը կարող է սահմանափակվել միայն պատժի կամ միայն դատապարտման վերանայման հնարավորությամբ: Քրեական գործերով բողոքարկման իրավունքը սահմանող կոնվենցիոն նշված դրույթը չի պահանջում նաեւ գործի ըստ էու-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

թյան վերանայում. վերանայումը կարող է լինել կամ իրավունքի հարցերով, կամ՝ ե՛լ իրավունքի, ե՛լ փաստի հարցերով միաժամանակ: Կոնվենցիան որեւէ կերպ մասնակից պետություններին չի պարտավորեցնում ստեղծել վերաքննիչ կամ վճռաբեկ ատյաններ: Յուրաքանչյուր մասնակից պետություն ազատ է որոշելու, թե դատական ակտի վերանայման իրավունքը կապահովվի վերաքննության, թե վճռաբեկության կարգով բողոքարկման միջոցով, դատական ակտի վերանայումը կսահմանափակվի միայն իրավունքի հարցերով, թե կներառի նաև փաստի հարցեր: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Կրոմբախն ընդդեմ Ֆրանսիայի (Krombach v. France) գործով վճռում նշվում է, որ պայմանավորվող կողմերին լայն հայեցողություն է տրված այն հարցը որոշելու առումով, թե ինչ միջոցներով պետք է ապահովվի Կոնվենցիայի 7-րդ արձանագրության 2-րդ հոդվածում նշված վերանայման իրավունքը: Նշված հոդվածի պահանջն այն է, որ վերանայման իրավունքը պետք է առկա լինի անմիջականորեն եւ անկախ իշխանությունների հայեցողությունից:

Միաժամանակ, նշված 2-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է այն բացառությունները, որոնց կարող է ենթակա լինել 1-ին մասում ամրագրված՝ բողոքարկման իրավունքը: Ըստ այդ մասում ամրագրված դրույթի՝ բողոքարկման իրավունքից կարող են բացառություններ արվել օրենքով սահմանված աննշան հանցագործությունների առնչությամբ կամ երբ տվյալ անձը դատապարտվել է բարձրագույն ատյանի կողմից, որը հանդես է եկել որպես առաջին ատյանի դատարան, կամ **դատապարտվել է այդ անձի արդարացման դեմ բողոքի քննարկման արդյունքում:**

Կոնվենցիայի 7-րդ արձանագրության 2-րդ հոդվածում ամրագրված դրույթների վերլուծությունը եւ Եվրոպական դատարանի համապատասխան նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը թույլ են տալիս եզրակացնել, որ քրեական գործերով բողոքարկման իրավունքի բովանդակությունը հանգում է նրան, որ քրեական գործով անձի դատապարտման կամ նշանակված պատժի վերանայման հնարավորությունը պետք է ապահովվի առնվազն մեկ վերադաս ատյանում:

6. ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով ամրագրվել է ընդհանուր իրավասության եռաստիճան դատական համակարգ: Սահմանադրական այս իրավակարգավորմանը համապատասխան՝ ՀՀ դատական օրենսգիրքը եւ քրեադատավարական ու քաղաքացիադատավարական օրենսգրքերը սահմանել են դատական ակտերի՝ վերադաս դատարանի կողմից վերանայման սահմաններն ու հիմքերը, վերաքննիչ եւ վճռաբեկ դատարանների լիազորությունները:

Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի եւ հիմնավորումների սահմաններում (ՀՀ քրեական դա-

տավարության օրենսգրքի 385-րդ հոդված): Վերաքննիչ բողոքի հիման վրա վերաքննիչ դատարանն ստուգում է գործի փաստական հանգամանքների բացահայտման եւ քրեական օրենքի կիրառման ճշտությունը, ինչպես նաեւ գործը քննելիս եւ լուծելիս քրեական դատավարական օրենքի նորմերի պահպանումը:

Վերաքննիչ դատարանում, որպես կանոն, բողոքի քննության ժամանակ առաջին ատյանի դատարանում հաստատված փաստական հանգամանքներն ընդունվում են որպես հիմք: Սակայն այս կանոնից նախատեսվում է նաեւ բացառություն. վերաքննիչ դատարանը կարող է ինքնուրույն գնահատել այս կամ այն փաստական հանգամանքը, երբ բողոքում վիճարկվում է որեւէ փաստական հանգամանք, եւ վերաքննիչ դատարանը հանգում է այն եզրակացությանը, որ տվյալ փաստական հանգամանքի վերաբերյալ եզրակացության հանգելիս առաջին ատյանի դատարանն ակնհայտ սխալ է թույլ տվել: Նման դեպքերում վերաքննիչ դատարանն իրավունք ունի հաստատված համարելու նոր փաստական հանգամանք կամ հաստատված չհամարելու ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքը: Վերաքննիչ բողոքի հիման վրա վերաքննիչ դատարանն ստուգում է նաեւ գործի փաստական հանգամանքների բացահայտման եւ քրեական օրենքի կիրառման ճշտությունը, ինչպես նաեւ գործը քննելիս եւ լուծելիս քրեական դատավարական օրենքի նորմերի պահպանումը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդվածի համաձայն՝ բողոքարկված դատական ակտը վերաքննիչ դատարանի կողմից բեկանվում կամ փոփոխվում է, եթե թույլ է տրվել դատական սխալ, այն է՝

1) գործի փաստական հանգամանքների մասին դատական ակտում շարադրված դատարանի հետեւությունները չեն համապատասխանում վերաքննիչ դատարանում հետազոտված ապացույցներին.

2) ճիշտ չի կիրառվել քրեական օրենքը կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը.

3) առկա է քրեադատավարական օրենքի էական խախտում.

4) դատավճռով նշանակված պատիժը չի համապատասխանում կատարված հանցանքի ծանրությանը եւ ամբաստանյալի անձին:

Վերաքննության կարգով վերանայման առարկայի, վերաքննիչ դատարանում գործի քննության սահմանների, վերաքննիչ դատարանի կողմից ստորադաս դատարանի ակտի բեկանման հիմքերի ուսումնասիրությունը վկայում է, որ առաջին ատյանի դատարանի դատավճիռը վերաքննիչ դատարան բողոքարկելու միջոցով ապահովվում է ինչպես դատապարտումը, այնպես էլ պատիժը բողոքարկելու իրավունքի իրացումը, վերաքննիչ դատարանը, որպես կանոն, վերանայում է իրավունքի հարցերը, նաեւ

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

առանձին բացառություններով՝ փաստի հարցեր: Ելնելով նշվածից, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերաքննիչ դատարանում առաջին ատյանի դատարանի կայացրած դատավճռի բողոքարկման հնարավորությունը գործում է անմիջականորեն, եւ քրեադատավարական օրենսդրությամբ վերաքննիչ դատարանին վերաքննիչ բողոքի քննության ընդունման հարցում որեւէ հայեցողական լիազորություն տրամադրված չէ՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ օրենսդրությունը հիմնականում երաշխիքներ ստեղծել է ինչպես ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 3-րդ մասով, այնպես էլ Եվրոպական կոնվենցիայի 7-րդ արձանագրության 2-րդ հոդվածով երաշխավորված՝ դատավճիռների վերանայման իրավունքի իրացման համար:

ՀՀ եռաստիճան դատական համակարգում նախատեսված է նաև վերաքննիչ դատարանի ընդունած դատական ակտերի բողոքարկման հնարավորությունը: ՀՀ վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի հիման վրա վերանայում է վերաքննիչ դատարանի ակտերը՝ իր սահմանադրաիրավական կարգավիճակի ու դատական համակարգում ունեցած գործառնական դերի շրջանակներում եւ վերջիններիս համապատասխան՝ ՀՀ քրեադատավարական օրենսգրքում սահմանված՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերի առկայության պայմաններում:

7. Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված իրավունքի իրացման հնարավորությունները պայմանավորված են դատական համակարգի կառուցվածքի առանձնահատկություններով եւ այդ համակարգում յուրաքանչյուր դատական ատյանի գործառնական դերով:

ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված դատավճիռների վերանայման իրավունքը դիտարկելով ՀՀ եռաստիճան դատական համակարգի կառուցվածքի առանձնահատկությունների, ինչպես նաև ՀՀ ստանձնած վերոհիշյալ միջազգային պարտավորությունների հետ համադրության մեջ՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ նշված նորմի սահմանադրաիրավական բովանդակությունը հանգում է նրան, որ քրեական **մեղադրանքի որոշումը չի կարող սահմանափակվել միայն մեկ ատյանի դատարանի կողմից քրեական գործի քննության շրջանակներով**: Հետեւաբար, հաշվի առնելով առաջին ատյանի դատարանի կայացրած դատավճիռները վերաքննիչ դատարան բողոքարկելու՝ օրենքով սահմանված կարգն ու վերաքննիչ դատարանի լիազորությունները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ առաջին ատյանի դատարանի կայացրած դատավճիռների՝ վերաքննիչ դատարան բողոքարկման միջոցով իրացվում է վերադաս դատարանի կողմից անձի նկատմամբ կայացված դատավճռի վերանայման իրավունքը:

Ինչ վերաբերում է վճռաբեկության կարգով վերաքննիչ դատական ակտերի վերանայմանը, ապա վերջինս հանդես է գալիս որպես վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված դատական սխալը շտկելու դատավարական երաշխիք, որի միջոցով վճռաբեկ դատարանն իրացնում է օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու իր սահմանադրական գործառույթը, եւ վճռաբեկության կարգով դատական ակտերի բողոքարկման դեպքում վերանայման իրավունքի իրացման հնարավորությունն իրավաչափորեն սահմանափակվում է վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակով եւ գործառնական դերով:

Սահմանադրական դատարանը, վերահաստատելով 2009թ. սեպտեմբերի 22-ի ՍԴՈ-832 որոշման մեջ ամրագրված իր այն դիրքորոշումը, որ պետական ցանկացած մարմնի կարող է տրվել այս կամ այն լիազորությունը, որն անհրաժեշտ է նրա առջեւ դրված խնդիրները լիարժեք լուծելու համար, եթե դրանք համապատասխանում են տվյալ մարմնի սահմանադրաիրավական կարգավիճակին եւ սահմանադրորեն ամրագրված ու երաշխավորված արժեքներին, ինչպես նաեւ հաշվի առնելով վերաքննիչ բողոքի հիման վրա առաջին ատյանի դատարանի դատական ակտի վերանայման առարկան եւ վերաքննիչ դատարանում գործի քննության սահմանները, գտնում է, որ վերաքննիչ դատարանին սույն գործով վեճի առարկա լիազորության տրամադրումը վերաքննիչ վարույթի տրամաբանության շրջանակներում է եւ միտված է վերաքննիչ դատարանի կողմից արդյունավետ արդարադատության իրականացման ապահովմանը: Սահմանադրական դատարանը գտնում է նաեւ, որ վերաքննիչ դատարանին վիճարկվող լիազորությունը վերապահելը նպատակ է հետապնդել կանխելու դատական շրջապտույտը: Նման լիազորության միջոցով դատական շրջապտույտի կանխումն իր հերթին հնարավորություն է ընձեռում երաշխավորել դատաքննությունը ողջամիտ ժամկետում կազմակերպելու սահմանադրաիրավական պահանջի իրացումը:

Միաժամանակ, հաշվի առնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 396-րդ հոդվածի 3-րդ մասի եւ 399-րդ հոդվածի 2-րդ մասի նորմատիվ դրույթները՝ կապված վերաքննիչ բողոքի հիման վրա առաջին ատյանի դատարանի դատավճռով նախատեսվածից ավելի խիստ պատիժ նշանակելու վերաքննիչ դատարանի լիազորության իրականացման առանձնահատկության հետ, ինչպես նաեւ փաստելով դատախազի, տուժողի իրավահաջորդի, նրա ներկայացուցչի եւ սույն գործով դիմողի վերաքննիչ բողոքների միաժամանակյա առկայության իրողությունը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ թեւեւ դիմողը ձեւականորեն իրացրել է ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 3-րդ մասում նախատեսված բողոքարկման իր իրավունքը, սակայն վերջինիս նկատմամբ

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

կիրառվել է ավելի խիստ պատիժ, հետևաբար՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ նման դեպքերում կիրառելի է ՀՀ ՍԳ 22.12.2009թ. ՍԳՈ-849 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը՝ նկատի ունենալով նաև, որ հիմնախնդիրը հետագա համալիր իրավակարգավորման անհրաժեշտություն ունի:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 6-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**19 հունվարի 2010 թվականի  
ՍԳՈ-852**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2009 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-ԻՆ ԴԱՄԱՍԿՈՍՈՒՄ  
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ  
ԱՆՁՆԱԳՐԵՐ ՈՒՆԵՑՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄՈՒՏՔԻ ԱՐՏՈՆԱԳԻՐ  
ՍՏԱՆԱԼՈՒ ՊԱՀԱՆՋԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ  
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**22 հունվարի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2009 թվականի փետրվարի 26-ին Դամասկոսում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Սիրիայի Արաբական Հանրապետության կառավարության միջեւ դիվանագիտական եւ պաշտոնական անձնագրեր ունեցողների համար մուտքի արտոնագիր ստանալու պահանջի վերացման մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(57)2010

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 02.12.2009թ. դիմումը սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Ա. Կիրակոսյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Չ Ե Ց**.

Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Սիրիայի Արաբական Հանրապետության կառավարության միջեւ դիվանագիտական եւ պաշտոնական անձնագրեր ունեցողների համար մուտքի արտոնագիր ստանալու պահանջի վերացման մասին համաձայնագիրն (այսուհետ՝ համաձայնագիր) ստորագրվել է 2009թ. փետրվարի 26-ին՝ Դամասկոսում:

Համաձայնագրի նպատակը Հայաստանի Հանրապետության եւ Սիրիայի Արաբական Հանրապետության՝ դիվանագիտական եւ պաշտոնական անձնագրեր ունեցող քաղաքացիների այցելությունները միմյանց երկրներ դյուրացնելն է:

Ըստ համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է, մասնավորապես.

- Պայմանավորվող կողմի քաղաքացուց, որը հանդիսանում է դիվանագիտական կամ հյուպատոսական անձնակազմի անդամ եւ ունի դիվանագիտական կամ պաշտոնական վավեր անձնագիր, ինչպես նաեւ Պայմանավորվող կողմի քաղաքացուց, որը հանդիսանում է իր պետության ներկայացուցիչը Հայաստանի Հանրապետության տարածքում տեղակայված միջազգային կազմակերպությունում եւ ունի դիվանագիտական կամ պաշտոնական անձնագիր, չպահանջել ձեռք բերել մուտքի արտոնագիր Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործելու համար, եւ նրան Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվելու ընթացքում տրամադրել կացության բացառիկ կարգավիճակ,

- Պայմանավորվող կողմի քաղաքացուց, որը հանդիսանում է դիվանագիտական եւ հյուպատոսական ներկայացուցչության անդամի ամուսինը, եւ նրանց խնամքի տակ գտնվող երեխաներից՝ պայմանով, որ վերջիններս ունեն դիվանագիտական կամ պաշտոնական անձնագիր, կամ երեխաների անունները նշված են իրենց հոր կամ մոր անձնագրերում, չպահանջել ձեռք բերել մուտքի արտոնագիր Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործելու համար, եւ նրանց Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվելու ընթացքում տրամադրել կացության բացառիկ կարգավիճակ,

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

- ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, որոնք ունեն դիվանագիտական կամ պաշտոնական անձնագրեր, հետևեն Սիրիայի Արաբական Հանրապետության օրենքներին եւ կանոններին վերջինիս սահմանն անցնելու եւ նրա տարածքում գտնվելու ողջ ընթացքում,

- Պայմանավորվող կողմի տարածքում Հայաստանի Հանրապետության քաղաքացու կողմից անձնագիրը կորցնելու դեպքում, համապատասխան դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչության միջոցով նրան տրամադրել նոր անձնագիր կամ ճամփորդական փաստաթուղթ՝ այդ մասին տեղյակ պահելով հյուրընկալ պետության կառավարության համապատասխան մարմիններին,

- համաձայնագրի ուժի մեջ մտնելուց առնվազն երեսուն օր առաջ դիվանագիտական ուղիներով փոխանակել իր համապատասխան գործող անձնագրերի նմուշօրինակները, իսկ համաձայնագրի գործողության մեջ մտնելուց առնվազն երեսուն օր առաջ դիվանագիտական ուղիներով փոխանակել իր նոր կամ փոփոխված անձնագրերի նմուշօրինակները՝ դրանք զուգակցելով նշված փաստաթղթերի մանրամասն նկարագրություներով,

- պետական անվտանգության, հասարակական կարգի, հասարակության առողջության պահպանման կամ այլ լուրջ պատճառներից ելնելով՝ համաձայնագրի կատարումը ժամանակավորապես լիովին կամ մասամբ կասեցնելու դեպքում այդ մասին դիվանագիտական ուղիներով Պայմանավորվող կողմին տեղյակ պահել երեսուն օր առաջ,

- համաձայնագրի դրույթների իրագործման ընթացքում ծագած ցանկացած տարաձայնություն լուծել Պայմանավորվող կողմի հետ խորհրդակցությունների կամ բանակցությունների միջոցով՝ առանց երրորդ կողմի կամ միջազգային դատարանի միջամտության:

Համաձայնագրով Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրին իրավունք է վերապահված մերժելու մուտքն իր երկրի տարածք կամ կրճատելու կացության ժամկետը մյուս Պայմանավորվող կողմի այն քաղաքացու, ում նրանք համարում են անցանկալի անձ:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

1. 2009 թվականի փետրվարի 26-ին Դամասկոսում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Սիրիայի Արաբական Հանրապետության կառավարության միջեւ դիվանագիտական եւ պաշտոնական անձնագրեր ունեցողների համար մուտքի արտոնագիր ստանալու պահանջի վերացման մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

22 հունվարի 2010 թվականի  
ՍԳՈ-853



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-ԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒԺԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳԱՂՏՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ  
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**22 հունվարի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ.Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Մ. Թովուզյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2009 թվականի հունիսի 14-ին Մոսկվայում ստորագրված՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության հավաքական անվտանգության համակարգի ուժերի եւ միջոցների գաղտնի կառավարման համակարգ ստեղծելու հիմնական սկզբունքների մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան՝ մուտքագրված 24.11.2009թ.:

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(57)2010

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ա. Նազարյանի գրավոր բացատրությունները, հետազոտելով համաձայնագիրը, ինչպես նաև գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության հավաքական անվտանգության համակարգի ուժերի եւ միջոցների գաղտնի կառավարման համակարգ ստեղծելու հիմնական սկզբունքների մասին համաձայնագիրն ստորագրվել է 2009 թվականի հունիսի 14-ին Մոսկվայում՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության հավաքական անվտանգության համակարգի ուժերի եւ միջոցների գաղտնի կառավարման համակարգ ստեղծելու նպատակով:

2. Գաղտնի կառավարման համակարգը Կազմակերպության հավաքական անվտանգության համակարգի ուժերի եւ միջոցների կառավարման համակարգի բաղկացուցիչ մասն է եւ հիմնվում է հավաքական անվտանգության տարածաշրջաններում (շրջաններում) Կողմերի գործերի (ուժերի) գաղտնի կառավարման համակարգերի եւ կապի միջոցների տարրերի վրա:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, փոխադարձության հիման վրա, ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները գաղտնիության պայմանակարգի եւ գաղտնի տեղեկատվության պահպանության ապահովման ուղղությամբ,
- ինքնուրույն կրել համաձայնագրի կատարման ընթացքում առաջացած ծախսերը, եթե յուրաքանչյուր կոնկրետ դեպքում այլ կարգ չի համաձայնեցվում, եւ այլն,

4. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրած Կողմերի կողմից դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարվելու մասին չորրորդ գրավոր ծանուցումն ավանդապահի ստանալու օրվանից:

Անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն ավելի ուշ կատարած Կողմերի համար համաձայնագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան գրավոր ծանուցումն ավանդապահին հանձնելու օրվանից:

5. Համաձայնագիրը կատարված է մեկ բնօրինակով, ռուսերեն: Համաձայնագրի բնօրինակը պահվում է Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության քարտուղարությունում, որը համաձայ-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

նագիրն ստորագրած յուրաքանչյուր պետության կողարկի դրա վավերացված պատճենը:

6. Համաձայնագրում ամրագրված դրույթները համահունչ են ՀՀ Սահմանադրության 8.2-րդ և 9-րդ հոդվածներին և բխում են միջազգային փոխշահավետ համագործակցության հաստատման սահմանադրական սկզբունքից:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 և 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

1. 2009 թվականի հունիսի 14-ին Մոսկվայում ստորագրված՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության հավաքական անվտանգության համակարգի ուժերի և միջոցների զաղտնի կառավարման համակարգ ստեղծելու հիմնական սկզբունքների մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**22 հունվարի 2010 թվականի  
ՍԳՈ- 854**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2009 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-ԻՆ ԿԱՀԻՐԵՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԵԳԻՊՏՈՍԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՄԻՋԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ, ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԿԱՄ ՀԱՏՈՒԿ  
ԱՆՉՆԱԳԻՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՉԱՆՑ ՄՈՒՏՔԻ ԱՐՏՈՆԱԳԻՐ ՍՏԱՆԱԼՈՒ  
ՊԱՀԱՆՋԻՅ ԵՐԿԿՈՂՄ ԱՉԱՍՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ  
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**22 հունվարի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2009 թվականի փետրվարի 24-ին Կահիրեում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Եգիպտոսի Արաբական Հանրապետության կառավարության միջեւ դիվանագիտական, ծառայողական կամ հատուկ անձնագիր ունեցող անձանց մուտքի արտոնագիր ստանալու պահանջից երկկողմ ազատման մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Գործի քննության առիթ է հանդիսացել Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանին ուղղված՝ Հանրապետության Նախագահի դիմումը՝ մուտքագրված 2009թ. դեկտեմբերի 2-ին:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Ա. Կիրակոսյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Բ Չ Ե Յ**.

1. Խնդրո առարկա համաձայնագիրն ստորագրվել է 2009թ. փետրվարի 24-ին Կահիրեում՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Է. Նալբանդյանի կողմից:

Հայաստանի Հանրապետությունն այս ոլորտում համանման համաձայնագրեր է կնքել մի շարք պետությունների հետ:

Համաձայնագրի հիմնական նպատակն է զարգացնել բարեկամական հարաբերությունները եւ համագործակցությունը երկու պետությունների միջեւ եւ դյուրացնել դիվանագիտական, ծառայողական կամ հատուկ անձնագրեր ունեցող անձանց ուղեորության հետ կապված ընթացակարգերը:

2. Վերլուծվող համաձայնագիրը բաղկացած է նախաբանից եւ 8 հոդվածներից:

Համաձայնագրի առաջին հոդվածն ամրագրում է, որ յուրաքանչյուր Կողմ ազատում է մյուս Կողմի պետության՝ վավերական դիվանագիտական, ծառայողական կամ հատուկ անձնագիր ունեցող քաղաքացիներին մուտքի արտոնագիր ստանալու պահանջից՝ այցելության նպատակով իր տարածք մուտք գործելու կամ մուտք գործելու օրվանից իննսուն (90) օրը չգերազանցող ժամանակահատվածով գտնվելու համար:

Համաձայնագրի երկրորդ հոդվածը նախատեսում է, որ Պայմանավորվող պետություններից որեւէ մեկում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների կամ հյուպատոսական հիմնարկների անդամներին, ինչպես նաեւ նրանց ընտանիքների անդամներին, որոնք ունեն վավերական դիվանագիտական, ծառայողական կամ հատուկ անձնագրեր, թույլատրվում է առանց մուտքի արտոնագրի մուտք գործել մյուս Կողմի պետության տարածք եւ գտնվել այնտեղ ծառայության ընթացքում:

Երկու պետությունների այն քաղաքացիները, որոնք ունեն համաձայնագրի առաջին հոդվածում նշված անձնագրեր, բացառությամբ երկրորդ հոդվածում նշված քաղաքացիների, որոնք մտադիր են մյուս Կողմի պետության տարածքում գտնվել 90 օրից ավելի, ապա պետք է մյուս Կողմի

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

պետության օրենսդրությանը համապատասխան ստանան մուտքի արտոնագիր (համաձայնագրի 3-րդ հոդված):

Համաձայնագիրը սահմանում է նաեւ, որ նշված անձնագրեր ունեցող՝ երկու պետությունների քաղաքացիների՝ մյուս պետության տարածք մուտք գործելը եւ այդ տարածքից հեռանալը պետք է իրականացվի միջազգային ուղեւորավոխադրումների համար թույլատրված Կողմերի սահմանային ցանկացած անցակետից: Բացի դրանից, համաձայնագիրն ուղղակի նախատեսում է, որ նշված իրավունքներից օգտվող անձինք չեն ազատվում մյուս Կողմի պետության օրենսդրությունը պահպանելու պարտականությունից:

Համաձայնագրի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր Կողմ իրեն իրավունք է վերապահում մասնակի կամ ամբողջությամբ դադարեցնելու համաձայնագրով նախատեսված անձանց մուտքի արտոնագիր ստանալու պահանջից ազատման իրավունքի պահպանումը, եթե դա թելադրված է պետական անվտանգության ապահովման, հանրային կարգի, առողջապահության կամ այլ լուրջ նկատառումներով, ինչի մասին անհապաղ իրազեկվում է մյուս Կողմը:

Համաձայնագրի 8-րդ հոդվածը նվիրված է համաձայնագիրն ուժի մեջ մտնելու եւ դադարեցնելու կարգին, ինչպես նաեւ դրա գործողության ժամկետին: Համաձայնագիրը վավերական է հինգ տարի ժամկետով եւ ինքնաբերաբար երկարաձգվում է նույն ժամկետով, եթե Կողմերից որեւէ մեկը զրավոր չհայտնի համաձայնագիրը դադարեցնելու իր ցանկության մասին այն դադարեցնելուց 6 ամիս առաջ:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը չի ստանձնում ֆինանսական բնույթի որեւէ պարտավորություն:

Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության փոխադարձության սկզբունքով ստանձնած պարտավորությունները համահունչ են ՀՀ Սահմանադրության 9-րդ հոդվածով հռչակված դրույթներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

1. 2009 թվականի փետրվարի 24-ին Կահիրեում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Եգիպտոսի Արաբական Հանրապետության կառավարության միջեւ դիվանագիտական, ծառայողական կամ հատուկ անձնագիր ունեցող անձանց մուտքի արտոնա-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

գիր ստանալու պահանջից երկկողմ ազատման մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**22 հունվարի 2010 թվականի  
ՍԳՈ-855**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-ԻՆ ԴՈՒՇԱՆՔԵՈՒՄ  
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՍԻԳՐԱՅԻՈՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԳԻ  
ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**22 հունվարի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (գեկուցող), Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալության պետ Գ. Եզանյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2007 թվականի հոկտեմբերի 5-ին Դուշանբեում ստորագրված՝ Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների միգրացիոն մարմինների ղեկավարների խորհրդի կազմավորման մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԿԻՐ ♦ 4(57)2010

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ ՀՀ սահմանադրական դատարան 27.11.2009թ. մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

1. Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների միգրացիոն մարմինների ղեկավարների խորհրդի կազմավորման մասին համաձայնագիրը (այսուհետ՝ համաձայնագիր) ՀՀ-ի կողմից ստորագրվել է 2007 թվականի հոկտեմբերի 5-ին:

2. Նշված համաձայնագրի նպատակն է միգրացիայի բնագավառում համագործակցության զարգացումը, ինչպես նաեւ միգրացիոն քաղաքականության հիմնական ուղղություններով փոխգործակցության համակարգումը:

3. Համաձայնագրի անբաժանելի մասն է կազմում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների միգրացիոն մարմինների ղեկավարների խորհրդի մասին կանոնադրությունը (այսուհետ՝ Կանոնադրություն):

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- համաձայնագրի այլ մասնակիցների հետ համատեղ ստեղծել Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների միգրացիոն մարմինների ղեկավարների խորհուրդ (այսուհետ՝ Խորհուրդ) (հոդվ.1),
- իրականացնել Խորհրդի գործունեությունն Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների միգրացիոն մարմինների ղեկավարների խորհրդի մասին կանոնադրության հիման վրա (հոդվ.2):

Կանոնադրության համաձայն Խորհուրդը հանդիսանում է Անկախ պետությունների համագործակցության (այսուհետ՝ ԱՊՀ) ճյուղային համագործակցության մարմին եւ նախորդված է միգրացիոն քաղաքականության բնագավառում փոխգործակցության համակարգման ապահովման եւ հարցերի լուծման համար:

Կանոնադրության համաձայն Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները՝

- Խորհրդի անդամ նշանակել ՀՀ միգրացիոն մարմնի ղեկավարին (Կանոնադրության կետ 4.1),
- ճանաչել Խորհրդի որոշումների խորհրդատվական բնույթը (Կանոնադրության կետ 4.9),

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

- Խորհրդում ՀՀ նախագահության ժամանակահատվածում, համագործակցելով ԱՊՀ գործադիր կոմիտեի եւ ԱՊՀ մասնակից պետությունների Միջխորհրդարանական վեհաժողովի հետ, երաշխավորել Խորհրդի քարտուղարության գործառույթների կատարումը ՀՀ միգրացիոն մարմնի կողմից (Կանոնադրության կետ 5.1),
- ՀՀ-ում Խորհրդի նիստի անցկացման դեպքում հոգալ Խորհրդի նիստերի նախապատրաստման եւ անցկացման ծախսերը (Կանոնադրության կետ 6),
- որպես ուղարկող պետություն հոգալ Խորհրդի անդամների եւ փորձագետների գործուղման ծախսերը (Կանոնադրության կետ 6),
- ՀՀ եւ ԱՊՀ այլ շահագրգիռ պետությունների միջոցների հաշվին ֆինանսավորել Խորհրդի ընդունած որոշումներին համապատասխան իրականացվող բոլոր տեսակի աշխատանքներն ու համատեղ ծրագրերը (Կանոնադրության կետ 6):

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2007 թվականի հոկտեմբերի 5-ին Դուշանբեում ստորագրված՝ Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների միգրացիոն մարմինների ղեկավարների խորհրդի կազմավորման մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**22 հունվարի 2010 թվականի  
ՍԳՈ-856**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 3-ԻՆ ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԵՆԻԼՅՈՒՔՍԻ  
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԲԵԼԳԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ,  
ԼՅՈՒՔՍԵՄՔՈՒՐԳԻ ՄԵԾ ԴՔՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ  
ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ) ՄԻՋԵՎ ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ԲՆԱԿՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՍՏԱՏԱԾ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԴԱՐՉՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ  
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ  
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**22 հունվարի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Մ. Թովուզյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալության պետ Գ. Եգանյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2009 թվականի հունիսի 3-ին Բրյուսելում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Բենիլյուքսի պետությունների (Բելգիայի Թագավորության, Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության եւ Նիդերլանդների Թագավորության) միջեւ անօրինական բնակություն հաստատած անձանց վերադարձնելու մասին համա-

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ♦ 4(57)2010  
27

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

ձայնագրում եւ կիրառման արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան՝ մուտքագրված 19.11.2009թ.:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի գրավոր բացատրությունները, հետազոտելով համաձայնագիրը եւ կիրառման արձանագրությունը, ինչպես նաեւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. Հայաստանի Հանրապետության եւ Բենիլյուքսի պետությունների (Բելգիայի Թագավորության, Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության եւ Նիդերլանդների Թագավորության) միջեւ անօրինական բնակություն հաստատած անձանց վերադարձնելու մասին համաձայնագիրը եւ կիրառման արձանագրությունն ստորագրվել են 2009թ. հունիսի 3-ին Բրյուսելում՝ փոխադարձության հիման վրա Պայմանավորվող կողմի տարածքում անօրինական բնակություն հաստատած անձանց վերադարձը, ինչպես նաեւ վերադարձնելու ենթակա անձանց տարանցումը դյուրացնելու նպատակով:

2. Համաձայնագրով եւ կիրառման արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունը, փոխադարձության հիման վրա, ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- Բենիլյուքսի պետության դիմումի հիման վրա, առանց ձեւականությունների, ՀՀ վերադարձնել դրա տարածքում անօրինական գտնվող յուրաքանչյուր անձի, երբ կարող է ապացուցվել կամ իրավաչափորեն ենթադրվել, որ այդ անձը ՀՀ քաղաքացի է,
- անհապաղ, առավելագույնը 30 օրվա ընթացքում, պատասխանել վերադարձնելու մասին ՀՀ-ին հասցեագրված դիմումներին,
- անհապաղ, առավելագույնը մեկամսյա ժամկետում, ՀՀ վերադարձնել այն անձին, ում վերադարձնելու հարցը դրական լուծում է ստացել,
- անձնական բնույթի տվյալների հաղորդումն իրականացնել միայն այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է Բենիլյուքսի պետության իրավասու մարմինների կողմից համաձայնագրի կատարման համար,
- հոգալ Բենիլյուքսի պետություն վերադարձվող անձանց ճանապարհածախսը՝ մինչեւ Բենիլյուքսի համապատասխան պետության սահման, ինչպես նաեւ համաձայնագրի 2-րդ հոդվածի 3-րդ կետում նշված ծախսերը եւ այլն:

3. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին Բելգիայի Թագավորության կառավարությանը Պայմանավորվող կողմերից վերջինի ծանուցելու օրվան հաջորդող երկրորդ ամսվա առաջին օրը:

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Բելգիայի Թագավորության կառավարությունը յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի կտեղեկացնի վերը նշված ծանուցումների մասին եւ համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթվի մասին:

Կիրառման արձանագրությունը կկիրառվի համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից:

4. Համաձայնագրի ավանդապահը Բելգիայի Թագավորության կառավարությունն է:

Համաձայնագիրը կատարված է հայերեն, ֆրանսերեն եւ հոլանդերեն, ընդ որում, բոլոր երեք տեքստերը հավասարազոր են: Տարբերակները հետագայում կգերակայի ֆրանսերեն տարբերակը:

Բնօրինակն ի պահ կհանձնվի համաձայնագրի ավանդապահին, որը համաձայնագրի հաստատված պատճենը կուղարկի համաձայնագրի մյուս Պայմանավորվող կողմերին:

5. Համաձայնագրում եւ կիրառման արձանագրության մեջ ամրագրված դրույթները համահունչ են ՀՀ Սահմանադրության 9-րդ եւ 25-րդ հոդվածներին եւ բխում են միջազգային փոխշահավետ համագործակցության հաստատման սահմանադրական սկզբունքից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

1. 2009 թվականի հունիսի 3-ին Բրյուսելում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Բենիլյուքսի պետությունների (Բելգիայի Թագավորության, Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության եւ Նիդերլանդների Թագավորության) միջեւ անօրինական բնակություն հաստատած անձանց վերադարձնելու մասին համաձայնագրում եւ կիրառման արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**22 հունվարի 2010 թվականի  
ՍԴՈ-857**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-ԻՆ ԲՈՆՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ  
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**22 հունվարի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ.Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2009 թվականի հունվարի 26-ին Բոննում ստորագրված՝ Վերականգնվող էներգետիկայի միջազգային գործակալության կանոնադրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան՝ մուտքագրված 10 դեկտեմբերի 2009թ.:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար Ա. Մովսիսյանի գրավոր բա-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

ցատրությունը, հետազոտելով Կանոնադրությունը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

2009թ. հունվարի 26-ին Բոննում ստորագրված՝ Վերականգնվող էներգետիկայի միջազգային գործակալության կանոնադրությամբ հիմնադրվում է միջազգային իրավունակությամբ օժտված Վերականգնվող էներգետիկայի միջազգային գործակալություն:

Կանոնադրությամբ նախատեսված են Գործակալության հիմնական մարմինների՝ Ասամբլեայի, Խորհրդի, Քարտուղարության լիազորությունները եւ իրավասությունները: Ըստ Կանոնադրության՝ Ասամբլեան եւ Խորհուրդը՝ Ասամբլեայի հաստատման պայմանով, կարող են հիմնել լրացուցիչ մարմիններ, որոնք անհրաժեշտ կհամարվեն Կանոնադրությանը համապատասխան իրենց գործառույթներն իրականացնելու համար:

Գործակալության նպատակն է խթանել վերականգնվող էներգետիկայի բոլոր տեսակի լայնատարած, ընդլայնվող ընդունումը եւ կայուն օգտագործումը՝ հաշվի առնելով վերականգնվող էներգետիկայի ազակցությունը շրջակա միջավայրի պահպանության գործում եւ ազգային ու ներպետական առաջնությունները եւ այն առավելությունները, որոնք բխում են վերականգնվող էներգետիկայի եւ էներգասպառման արդյունավետության միջոցների համադրված մոտեցումից:

Կանոնադրության համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է, մասնավորապես.

- Կանոնադրությանն անդամակցելով՝ գործել Կանոնադրությամբ սահմանված նպատակներին եւ գործունեությանը համապատասխան,
- Գործակալության բյուջե կատարել պարտադիր ներդրումներ՝ հիմնված Միավորված ազգերի կազմակերպության գնահատման սանդղակի վրա՝ Ասամբլեայի կողմից սահմանված կարգով,
- ապահովել, որպեսզի Գործակալությունն իր տարածքում օգտվի այնպիսի իրավունակությունից, որը կարող է անհրաժեշտ լինել նրա գործառույթների կատարման եւ նպատակների իրականացման համար,
- Գործակալության մյուս անդամների հետ մեկտեղ, որոշում կայացնել արտոնությունների եւ անձեռնմխելիության մասին առանձին համաձայնագրի վերաբերյալ,
- Կանոնադրության մեկնաբանության կամ կիրառության հետ կապված՝ անդամների միջեւ ծագած վեճերը լուծել խաղաղ ճանապարհով՝ Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության 2-րդ հոդվածի 3-րդ պարբերությանը համապատասխան, եւ այդ նպատակով փորձել լու-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

ծում գտնել Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության 33-րդ հոդվածի 1-ին պարբերությունում նշված եղանակով:

Կանոնադրությամբ նախատեսված են Գործակալության գործունեությունից բխող աշխատանքների շրջանակը, Գործակալության աշխատանքային ծրագրերի եւ նախագծերի իրականացման կարգը, Կանոնադրությանն անդամների կողմից անդամակցության պայմաններն ու կարգը, Գործակալության Ասամբլեայում դիտորդի կարգավիճակ շնորհելու առանձնահատկությունները, այլ կազմակերպությունների հետ Գործակալության հարաբերությունների առանձնահատկությունները, Կանոնադրության մեկնաբանության կամ կիրառման հետ կապված վեճերի լուծման կարգը, Գործակալության անդամների իրավունքների ժամանակավոր դադարեցման կարգն ու պայմանները:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2009 թվականի հունվարի 26-ին Բոննում ստորագրված՝ Վերականգնվող էներգետիկայի միջազգային գործակալության կանոնադրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**22 հունվարի 2010 թվականի  
ՍԳՈ-858**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2008 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-ԻՆ ՔԻՇՆԵՎՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ԱՆԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ  
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ  
ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԳԱՄՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ  
ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**22 հունվարի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի (զեկուցող), Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալության պետ Գ. Եգանյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2008 թվականի նոյեմբերի 14-ին Քիշնևում ստորագրված՝ Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների աշխատող միգրանտների եւ նրանց ընտանիքների անդամների իրավական կարգավիճակի մասին կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 10.12.2009թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով կոնվենցիան եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. Կոնվենցիան ստորագրվել է 2008 թվականի նոյեմբերի 14-ին՝ Քիչ-նեւում: Կոնվենցիան բաղկացած է 5 բաժիններից, որոնցում ներառված են 32 հոդվածներ:

2. Կոնվենցիայի նպատակն է օրենսդրությամբ եւ միջազգային պարտավորություններով կանոնակարգվող նորմերի սահմաններում հավասար վերաբերմունք ապահովելու համար պայմաններ ստեղծել աշխատող միգրանտների, նրանց ընտանիքների անդամների եւ ընդունող Կողմի քաղաքացիների նկատմամբ:

Կոնվենցիան, ներառելով նպատակային տերմինների սահմանումը, նշելով գործողության տարածական սահմանները՝

ա) մերժում է խտրականությունը՝ անկախ սեռից, ռասայից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային, էթնիկական կամ սոցիալական ծագումից, կողմերի քաղաքացիությունից, տարիքից, տնտեսական, գույքային, ընտանեկան դրությունից կամ ցանկացած այլ հատկանիշից,

բ) թվարկում է աշխատող միգրանտների եւ նրանց ընտանիքների անդամների հիմնական իրավունքները՝ ընդունող Կողմի տարածք մուտք գործելու, այնտեղ մնալու, տեղաշարժվելու եւ այնտեղից մեկնելու, համարժեք աշխատանքի դիմաց հավասար վարձատրությունից օգտվելու, բնակարանի անձեռնմխելիության նկատմամբ անօրինական ոտնձգությունից պաշտպանվելու, կրթություն ստանալու,

գ) առանձնացնում է սահմանամերձ եւ սեզոնային աշխատողների եւ նրանց ընտանիքների անդամների նկատմամբ կիրառվող դրույթները:

3. Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ ապահովել, որպեսզի աշխատող միգրանտներն օգտվեն այնպիսի իրավունքներից, որպիսիք են՝ անվտանգ աշխատանքային պայմանները, համարժեք աշխատանքի դիմաց հավասար վարձատրությունը, ներառյալ լրավճարումները, փոխհատուցման հիմունքով բնակարանից օգտվելու, սոցիալական ապահովության (սոցիալական ապահովագրության)՝

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

բացառությամբ կենսաթոշակային, արտադրությունում դժբախտ պատահարի կամ մասնագիտական հիվանդության արդյունքում կյանքին եւ առողջությանը հասցված վնասի փոխհատուցման, աշխատանքային գործունեության դիմաց ստացած վարձատրության բանկային դրամական փոխանցման իրավունքները,

- աշխատող միգրանտների ընտանիքների անդամներին (բացառությամբ սահմանամերձ եւ սեզոնային աշխատողների) տրամադրել հավասար իրավունքներ՝ ստանալու կրթություն եւ լրացուցիչ մասնագիտական կրթություն, եւ կազմել հայոց լեզվի ուսումնասիրման ծրագրեր եւ աջակցել այդ ծրագրերի իրականացմանը:

Կոնվենցիան գործում է ուժի մեջ մտնելու օրվանից հինգ տարվա ընթացքում, ժամկետը լրանալուց հետո այն ինքնաբերաբար երկարաձգվում է՝ հերթական հնգամյա ժամկետով, եթե Կողմերն այլ որոշում չեն ընդունում:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2008 թվականի նոյեմբերի 14-ին Քիշնետում ստորագրված՝ Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների աշխատող միգրանտների եւ նրանց ընտանիքների անդամների իրավական կարգավիճակի մասին կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**22 հունվարի 2010 թվականի  
ՍԴՈ-859**

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ♦ 4(57)2010



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2009 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՄԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ  
ՀԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ /ՀԱՅԱՍՏԱՆ ԲՖԳ ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ  
ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՅՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ/  
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՍՏՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**27 հունվարի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2009 թվականի սեպտեմբերի 15-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Ասիական զարգացման բանկի միջեւ շրջանակային ֆինանսավորման համաձայնագրում /Հայաստան ԲՖԳ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր/ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Գործի քննության առիթ է հանդիսացել Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանին ուղղված՝ Հանրապետության Նախագահի դիմումը՝ մուտքագրված 27.11.2009թ.:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց .**

1. Խնդրո առարկա համաձայնագիրը կնքվել է Հայաստանի Հանրապետության եւ Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) միջեւ, իսկ ՀՀ էկոնոմիկայի նախարարի կողմից այն ստորագրվել է 2009թ. սեպտեմբերի 15-ին:

Համաձայնագրի հիմնական նպատակն է ենթատարածաշրջանային ճանապարհային միջանցքների վերականգնումը, ինչպես նաեւ պետական տրանսպորտային ճանապարհային համակարգի զարգացումը, ճանապարհային ենթակառուցվածքների եւ ճանապարհային ցանցի կառավարման կարողությունների բարելավումը ու ճանապարհների անվտանգության ապահովումը:

Ինչպես վկայում է համաձայնագրի 2-րդ ժամանակացույցի ուսումնասիրությունը, ակնկալվում է, որ Ծրագրի իրականացման արդյունքում անհամեմատ կավելանան արտահանման եւ ներկրման, ինչպես նաեւ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքով տարանցիկ երթուղիների ծավալները եւ քանակը, երթուղիների հոսքն սպասարկելու նպատակով կբարեկարգվեն եւ կարդիականացվեն առնվազն 3 սահմանային եւ մաքսային կետեր ու դրանց ենթակառուցվածքները, կնվազի ճանապարհատրանսպորտային պատահարների թվաքանակը, կկրճատվի միջանցքով բեռնափոխադրումների եւ ուղեւորությունների ժամանակը:

ՀՀ ճանապարհային ենթաուղրտի կատարելագործումը, ըստ համաձայնագրի, ենթադրում է ճանապարհային ցանցի զարգացում, ճանապարհների շինարարություն, բարենորոգում, վերականգնում եւ կայուն պահպանում, ինչպես նաեւ ծրագրավորման եւ կառավարման համապատասխան բարեփոխումներ, որոնք կստեղծեն տնտեսական զարգացման հուսալի նախադրյալներ:

2. Համաձայնագիրը բաղկացած է մի շարք բաժիններից եւ իր անբաժանելի մասը կազմող թվով 6 ժամանակացույցերից, ընդ որում՝ 1-ին ժամանակացույցն իր հերթին բովանդակում է 2 աղյուսակներ, այն է՝ ներդրումների նախնական ծրագիրը եւ ճանապարհային ենթաուղրտի ճանապարհային քարտեզը (2010-2017թթ.):

Համաձայնագրում եւ կից ժամանակացույցերում ներառված են բազ-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

մափուլ ֆինանսավորման գործիքի (ԲՖԳ-ի) բաղկացուցիչները, նախնական ներդրումային ծրագիրը, ճանապարհային ենթաուղրտի ճանապարհային քարտեզը, ԲՖԳ-ի նախագծման եւ մոնիտորինգի հայեցակարգը, ծրագրերի իրականացման շրջանակները, ընտրության չափանիշները, սոցիալական խնդիրները եւ այլ պարտավորություններ:

Ներդրումների նախնական ծրագրի ընդհանուր արժեքը 2009-2017թթ. ժամանակահատվածի համար կազմում է 1.453 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումար:

Համաձայնագրի թիվ 1 ժամանակացույցի 2-րդ աղյուսակից բխում է, որ մինչեւ 2017 թվականը բարենորոգվելու են ՀՀ 620 կմ միջպետական եւ 1200 կմ գյուղական ճանապարհներ, ընդամին՝ 1-ին աղյուսակում բերված է նորոգման ենթակա միջպետական ճանապարհների համապատասխան հատվածների սպառիչ ցանկը (Մ-1, Մ-2, Մ-3, Մ-6):

Համաձայնագրով նախատեսված է, որ վարկատուն՝ ԱԶԲ-ն, վարկեր կտրամադրի ներդրումային ծրագրի առանձին բաղադրիչների ֆինանսավորման համար եւ յուրաքանչյուր վարկ հանդես կգա իբրեւ առանձին տրանշ: Վերջինս կարող է ֆինանսավորվել նախորդ կամ հաջորդ տրանշներից տարբերվող ֆինանսավորման պայմաններով:

Վերը նշված ԲՖԳ-ի շրջանակներում առկա առավելագույն ֆինանսավորման չափն է 500 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումար, որը տրամադրվելու է առանձին տրանշներով ԱԶԲ-ի՝ Սովորական կապիտալ միջոցներից 440 մլն դոլար եւ Հատուկ հիմնադրամի միջոցներից՝ 60 մլն դոլար:

Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության կողմից հատկացվելու է 70 մլն դոլար: Ի դեպ, ՀՀ կառավարության կողմից համաֆինանսավորման ենթակա գումարի չափը կազմելու է 392 մլն դոլար:

Վարկառուն՝ Հայաստանի Հանրապետությունը, պարտավորվում է յուրաքանչյուր տրանշի գումարներն օգտագործել Ծրագրերի ծախսերը ֆինանսավորելու նպատակով՝ սույն համաձայնագրի եւ յուրաքանչյուր տրանշի մասին կնքված առանձին համաձայնագրերի պայմաններին համապատասխան: Ներդրումային ծրագիրը ֆինանսավորելու համար անհրաժեշտ է ներկայացնել պարբերական ֆինանսավորման հայտ (ՊՖՀ): Յուրաքանչյուր առանձին տրանշի գումարը չպետք է լինի 50 մլն ԱՄՆ դոլարից կամ դրա համարժեքից ցածր: Համաձայնագիրը սահմանում է նաեւ ՊՖՀ-ին ներկայացվող հիմնական պահանջները:

ԲՖԳ-ի շրջանակներում ֆինանսավորվող բոլոր ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների գնումներն իրականացվելու են ԱԶԲ-ի Գնումների ուղեցույցին համապատասխան:

Համաձայնագիրը սահմանում է, որ 2017 թվականի դեկտեմբերի 31-ն այն վերջնաժամկետն է, որի դրությամբ ցանկացած տրանշի շրջանակներում կարող է վճարում կատարվել:

Համաձայնագրի 3-րդ ժամանակացույցում արձանագրված է, որ Ծրագրի իրականացման պատասխանատուն Ծրագրի կառավարման խորհուրդն է, որի համանախագահներն են ՀՀ էկոնոմիկայի ու տրանսպորտի եւ կապի նախարարները: Սահմանված է նաեւ, որ ներդրումային ծրագրի անմիջական իրականացումը եւ մոնիտորինգը հանձնարարվելու է ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարության Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհներ («Հայավտոճան») ՊՈԱԿ-ին, որը կհիմնի Ծրագրի կառավարման գրասենյակ:

Համաձայնագիրն ԱԶԲ-ին իրավունք է վերապահում ուսումնասիրելու ԲՖԳ-ի շրջանակներում իրականացվող ծրագրերին առնչվող ցանկացած գործողություն: Մասնավորապես, ԱԶԲ-ի կողմից ֆինանսավորվող բոլոր պայմանագրերը պետք է ներառեն դրույթներ, որոնց համաձայն ԱԶԲ-ն իրավունք ունի քննության եւ աուդիտի ենթարկելու Հայավտոճանի բոլոր ֆինանսական եւ հաշվապահական փաստաթղթերը, բոլոր կապալառուներին, մատակարարներին, խորհրդատուներին եւ այլ ծառայություններ մատուցողներին:

Համաձայնագրի 4-րդ ժամանակացույցում տեղ են գտել նախագծերի ընտրության չափանիշներին եւ հաստատման գործընթացին վերաբերող պարտավորություններ:

Համաձայնագրի հաջորդ` 5-րդ ժամանակացույցում, շարադրված են սոցիալական ապահովությանը եւ երաշխիքներին առնչվող պահանջներ:

Առանձին ուշադրություն է դարձված շահագործման ընթացքում ճանապարհային միջանցքի կայուն պահպանության, ինչպես նաեւ շինարարության որակին, բնապահպանական խնդիրներին վերաբերող հարցերին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտնելու այն պահից, երբ ՀՀ-ն ԱԶԲ-ին կձանուցի գործող օրենսդրության համաձայն բոլոր ներպետական ընթացակարգերի ավարտի մասին, բայց ոչ ուշ, քան մինչեւ 1-ին տրանշի ծրագրի համար վարկային համաձայնագրի ուժի մեջ մտնելը:

Ըստ համաձայնագրի` Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է որոշակի ֆինանսական պարտավորություններ, մասնավորապես, պարտավորվում է իր սեփական միջոցների հաշվին տրամադրել համաֆինանսավորում Ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումների գծով` համապատասխանաբար 392.0 միլիոն եւ 10.0 մլն ԱՄՆ դոլարի չափով: Բացի դրանից, Հայաստանի Հանրապետությունը համաձայնում է իր սեփական միջոցների հաշվին կատարել ոչ կամավոր վերաբնակեց-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

ման, ինչպես նաև ճանապարհային միջանցքի շահագործման ընթացքում ճանապարհների պահպանության գծով առաջացած ծախսերի ֆինանսավորումը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

1. 2009 թվականի սեպտեմբերի 15-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Ասիական զարգացման բանկի միջեւ շրջանակային ֆինանսավորման համաձայնագրում /Հայաստան ԲՖԳ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր/ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը :

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**27 հունվարի 2010 թվականի  
ՍԳՈ-860**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ  
ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ /ՀԱՏՈՒԿ  
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ/ ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ  
ՄԻՋԱՆՅՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ-ԾՐԱԳԻՐ 1/ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**27 հունվարի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2009 թվականի հոկտեմբերի 12-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Ասիական զարգացման բանկի միջեւ վարկային համաձայնագրում /Հատուկ գործողություններ /Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Ծրագիր 1/ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հայաստանի Հանրապետու-

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(57)2010

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

թյան սահմանադրական դատարանին ուղղված՝ Հանրապետության Նախագահի դիմումը՝ մուտքագրված 08.12.2009թ.:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց** .

1. Համաձայնագիրը կնքվել է Հայաստանի Հանրապետության եւ Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) միջեւ եւ ՀՀ Էկոնոմիկայի նախարարի կողմից այն ստորագրվել է 2009թ. հոկտեմբերի 12-ին:

Համաձայնագիրը կնքվել է՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության եւ Ասիական զարգացման բանկի միջեւ 2009թ. սեպտեմբերի 15-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Ասիական զարգացման բանկի միջեւ շրջանակային ֆինանսավորման համաձայնագիրը:

Համաձայնագրի հիմնական նպատակն է նպաստել Հայաստանի ենթատարածաշրջանային եւ պետական տրանսպորտային ճանապարհային ցանցի զարգացմանը, բարելավել ճանապարհային ենթակառուցվածքը, ճանապարհային ցանցի կառավարման կարողությունները եւ Ծրագրում ընդգրկված ճանապարհների անվտանգությունը:

Ծրագրի իրականացման արդյունքում սկսկալվում է, որ կմեծանա առևտրաշրջանառությունը, կնվազեն բեռնափոխադրումների ծախսերը, կբարելավվեն կառավարման հնարավորությունները, կաճի տարանցիկ երթևեկությունը եւ այլն:

2. Համաձայնագիրը բաղկացած է 6 հոդվածներից եւ վերջինիս անբաժանելի մասը կազմող թվով 5 հավելվածներից, ընդ որում՝ 3-րդ հավելվածն իր հերթին բովանդակում է աղյուսակ, այն է՝ վարկային միջոցների հատկացումներ եւ տրամադրումներ, համաձայն որի՝ համաձայնագրի ընդհանուր արժեքը կազմում է 38.443.000 փոխարկման հատուկ իրավունքին (ՓՀԻ) համարժեք գումար՝ տարբեր արտարժույթներով: Հիշյալ գումարն Ասիական զարգացման բանկի կողմից վճարվելու է իր Հատուկ ֆոնդի ռեսուրսների հաշվին:

Համաձայնագրով սահմանվում են վարկային միջոցների տրամադրման եւ օգտագործման կարգը, վարկին եւ դրա մարման կարգին ու ժամկետներին վերաբերող պայմանները, վարկառուի հատուկ պարտավորությունները, համաձայնագրի գործողության ժամկետը, ինչպես նաեւ այլ դրույթներ:

Համաձայնագրի 1-ին հոդվածն արձանագրում է, որ վարկը հատկացվելու է ԱԶԲ-ի Հատուկ գործառնությունների վարկի տրամադրման կար-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

զին համապատասխան: Նշված հոդվածում պարզաբանվում են համաձայնագրի տեքստում օգտագործված մի շարք եզրույթների նշանակությունը եւ իմաստը:

Համաձայնագրի 1-ին հավելվածից բխում է, որ Ծրագրի հիմնական բաղադրիչներից են Երեւան-Աշտարակ չորսշերտանի ճանապարհի 18.4 կմ հատվածի վերակառուցումը եւ Երեւան-Արարատ ճանապարհի (38 կմ) անվտանգության բարձրացումը:

Նշված ներդրումային Ծրագիրը նախատեսվում է ավարտել 2013թ. օգոստոսի 31-ին:

Համաձայնագրի 2-րդ հավելվածին (Ամորտիզացիոն վճարների գրաֆիկ) համապատասխան վարկառուն մայր գումարի մարումը կատարելու է ԱՄՆ դոլարով՝ 2018թ. մարտի 15-ից մինչեւ 2041թ. սեպտեմբերի 15-ը՝ ըստ սահմանված գրաֆիկի եւ մասնաբաժինների:

Վարկառուն՝ Հայաստանի Հանրապետությունը, պարտավորվում է ԱԶԲ-ին վճարել տարեկան 1% տոկոսադրույքով վարկային վճար վարկի մարման արտոնյալ ժամանակահատվածում՝ վարկային հաշվից մասնահանված եւ վճարման ենթակա վարկաբաժնի դիմաց, իսկ այնուհետեւ վճարել տարեկան 1.5% տոկոս: Ընդամին, նշված տոկոսները եւ ցանկացած այլ վճարներ պետք է վճարվեն կիսամյակը մեկ անգամ՝ ամեն տարվա մարտի 15-ին եւ սեպտեմբերի 15-ին: Հարկ է արձանագրել, որ նշված վարկը Հայաստանի Հանրապետությանը տրամադրվում է արտոնյալ ժամկետով (մինչեւ 2018թ.), որից հետո վարկառուն պարտավորվում է մայր գումարի մարումը կատարել մինչեւ 2041թ. սեպտեմբերի 15-ը:

Վարկառուն համաձայնում է ապահովել, որ վարկային միջոցներն ուղղվեն բացառապես Ծրագրով նախատեսված ծախսերի ֆինանսավորմանը (համաձայնագրի 3-րդ հոդված):

Վարկի եզրափակման ժամկետ է սահմանվում 2014թ. հունիսի 30-ը կամ Հայաստանի Հանրապետության եւ ԱԶԲ-ի միջեւ փոխհամաձայնեցված այլ ժամկետ:

Համաձայնագրով նախատեսված է, որ ապրանքների, աշխատանքների եւ խորհրդատվական ծառայությունների գնումներն իրականացվելու են վարկատուի՝ ԱԶԲ-ի, Գնումների ուղեցույցին համապատասխան:

Ըստ համաձայնագրի 4-րդ հոդվածի՝ վարկառուն ստանձնում է մի շարք հատուկ պարտավորություններ, որոնք շարադրված են համաձայնագրի 5-րդ հավելվածում: Մասնավորապես, վարկառուն պարտավորվում է ծրագրի շրջանակներում վերակառուցվելիք ճանապարհների պահպանության համար պետական բյուջեում նախատեսել անհրաժեշտ փաստացի տարեկան ծախսեր: Բացի դրանից, Հայաստանի Հանրապետությունն իր սեփական միջոցների հաշվին կատարելու է ոչ կամավոր վերաբնակեց-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

ման ընթացքում առաջացած այն ծախսերի ֆինանսավորումը, որոնք կզե-  
րագանցեն բյուջետային նախահաշվարկը:

Համաձայնագիրը եւ վերջինիս 5-րդ հավելվածն ամրագրում են նաեւ  
վարկառուի պարտավորությունները՝ կապված շինարարության որակին  
ներկայացվող չափանիշներին, հանրային կառավարմանը եւ կոռուպցիա-  
յի դեմ պայքարին, ճանապարհների անվտանգությանը եւ բնապահպա-  
նական խնդիրներին:

Շինարարության նկատմամբ վերահսկողությունը, որակի հսկողու-  
թյունը եւ պայմանագրերի կառավարումն իրականացվելու են միջազգա-  
յին ընդունելի չափանիշների համաձայն:

Վարկառուն երաշխավորում է, որ Ծրագրի շրջանակներում ԱԶԲ-ի  
կողմից ֆինանսավորվող բոլոր պայմանագրերը կնախատեսեն դրույթներ,  
ըստ որոնց՝ ԱԶԲ-ին իրավունք է վերապահվում աուդիտի ենթարկել եւ  
ստուգել Ծրագրի իրականացման գրասենյակի գրառումներն ու հաշիվնե-  
րը եւ բոլոր կապալառուներին, մատակարարներին, խորհրդատուներին եւ  
Ծրագրի հետ կապված բոլոր այլ ծառայություններ մատուցողներին:

Համաձայնագրով ՀՀ պարտավորությունների կատարման համար  
պատասխանատվությունը կրելու է Ծրագրի կառավարման խորհուրդը,  
որի համանախագահներն են ՀՀ էկոնոմիկայի ու տրանսպորտի եւ կապի  
նախարարները:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտնելու Հայկական կողմից անհրաժեշտ  
համապատասխան ներպետական ընթացակարգերն ավարտելու մասին  
ԱԶԲ-ին ծանուցելու օրվանից:

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության տեղեկանքի՝ համա-  
ձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է որոշակի ֆի-  
նանսական պարտավորություններ, որոնք նախատեսված են համաձայ-  
նագրի 2-րդ հոդվածում, 2-րդ հավելվածում, 5-րդ հավելվածի 9-րդ, 10-րդ եւ  
15-րդ կետերում:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաս-  
տանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կե-  
տով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական  
դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ  
հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դա-  
տարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

1. 2009 թվականի հոկտեմբերի 12-ին ստորագրված՝ Հայաստանի  
Հանրապետության եւ Ասիական զարգացման բանկի միջեւ վարկային  
համաձայնագրում /Հատուկ գործողություններ /Հյուսիս-հարավ ճանա-  
պարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Ծրագիր 1/ ամրագրված

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը :

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**27 հունվարի 2010 թվականի  
ՍԳՈ-861**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-ԻՆ ԴՈՒՇԱՆՔԵՈՒՄ  
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԱՓՇՏԱԿՈՒՄՆԵՐԻ  
ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԱԴԱՐՉԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ  
ԳՈՐԾՈՒՄ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ  
ՄԱՍԻՆ ԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ  
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**27 հունվարի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պետի տեղակալ Ա. Օսիկյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2007 թվականի հոկտեմբերի 5-ին Դուշանբեում ստորագրված՝ Մշակութային արժեքների հափշտակումների դեմ պայքարում եւ դրանց վերադարձի ապահովման գործում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին համաձայնագրում անրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետու-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԿԻՐ ♦ 4(57)2010  
46

թյան Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 11.01.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Չ Ե Ց** .

1. Համաձայնագիրն ստորագրվել է 2007 թվականի հոկտեմբերի 5-ին Դուշանբեում՝ մշակութային արժեքների հափշտակումների կանխման եւ դրանց վերադարձի ապահովման գործում համաձայնեցված միջոցների իրականացման եւ մշակութային արժեքների հափշտակումների դեմ արդյունավետ պայքար իրականացնելու նպատակով:

2. Համաձայնագրով սահմանված են համագործակցության հիմնական ուղղությունները եւ ձեւերը, մշակութային արժեքների առեւանգման դեպքում ծանուցումների իրականացման կարգը եւ ձեւերը, առեւանգված մշակութային արժեքների վերադարձման կարգը:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- ՀՀ իրավասու մարմինների միջոցով իրականացնել համագործակցություն մշակութային արժեքների առեւանգման հետ կապված իրավախախտումների նախազգուշացման, խափանման, հայտնաբերման, բացահայտման, դրանց հետախուզման եւ վերադարձման ապահովման գործում,
- մշակութային արժեքների առեւանգման դեմ պայքարի եւ դրանց վերադարձման ապահովման գործում իրականացնել ՀՀ եւ համաձայնագրի այլ մասնակիցների միջեւ համագործակցության նորմատիվ իրավական բազայի կատարելագործում եւ այդ ոլորտում ՀՀ համապատասխան օրենսդրության ներդաշնակեցում,
- ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները մշակութային արժեքների ներմուծման եւ արտահանման կարգի հաստատման եւ ապահովման, իր տարածքում այդ մշակութային արժեքների հետ կապված որեւէ գործողության իրականացման համար, ինչպես նաեւ մշակութային արժեքների առեւանգման, իրացման, անօրինական ներմուծման եւ արտահանման, անօրինական պեղումների անցկացման եւ մշակութային արժեքներին առնչվող այլ անօրինական գործողությունների իրականացման հետ կապված

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

իրավախախտումների կանխման, խափանման եւ բացահայտման համար,

- սահմանել եւ կիրառել պատժամիջոցներ անօրինական գործողությունների իրականացման հետ կապված իրավախախտումների կամ դրանց մասնակից իրավաբանական եւ ֆիզիկական անձանց նկատմամբ,
- իր տարածքում մշակութային արժեքների առեւանգման դեպքում 30 օրվա ընթացքում ծանուցել Կողմերի կենտրոնական իրավասու մարմիններին, իսկ համապատասխան ծանուցում ստանալու դեպքում ծանուցում ստացած կողմի իրավասու մարմնին 90 օրվա ընթացքում ծանուցել ձեռնարկված միջոցառումների մասին կամ ուղարկել հիմնավորված հայց՝ առեւանգված մշակութային արժեքները հայցող կողմի իրավասու մարմնին վերադարձնելու մասին,
- առեւանգված մշակութային արժեքների թվում հաշվառվող մշակութային արժեքների նկատմամբ սեփականության իրավունքի վերաբերյալ վեճ առաջանալու դեպքում դրանց սեփականատերերի մասին հարցը լուծել դատական կարգով՝ այն կողմի օրենսդրությանը համապատասխան, որի տարածքում դրանք հայտնաբերվել են,
- սպահովել ստացված տեղեկությունների գաղտնիությունը, եթե հայցող կողմն անցանկալի է համարում դրանց բովանդակության հրապարակումը,
- հայցող կողմի իրավասու մարմնին գրավոր ծանուցել հայցի կատարման մերժման մասին՝ նշելով մերժման պատճառները,
- առեւանգված մշակութային արժեքները մաքսային սահմաններով տեղափոխելու ժամանակ այդ տեղափոխման հետ կապված մաքսային եւ այլ վճարումներ չգանձել,
- ինքնուրույն հոգալ համաձայնագրի կատարման ընթացքում առաջացող ծախսերը՝ բացառությամբ առեւանգված մշակութային արժեքների կալանման, պահպանման, հայցող կողմի տարածք վերադարձման հետ կապված ծախսերի:

4. Համաձայնագրով սահմանված են նաեւ այն ուժի մեջ մտնելու կարգն ու պայմանները, համաձայնագրին միանալու, ինչպես նաեւ դուրս գալու կարգը, կիրառման եւ մեկնաբանման ընթացքում վիճելի հարցերի լուծման կարգը, համաձայնագրում փոփոխությունների եւ լրացումների կատարման կարգը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 և 64-րդ

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

1. 2007 թվականի հոկտեմբերի 5-ին Դուշանբեում ստորագրված՝ Մշակութային արժեքների հափշտակումների դեմ պայքարում եւ դրանց վերադարձի ապահովման գործում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը :

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**27 հունվարի 2010 թվականի  
ՍԳՈ-862**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2005 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅՏԵՄԲԵՐԻ 25-ԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ  
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ  
ՀԱՓՇՏԱԿՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԱԳԱՐՉԻ  
ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԱՆԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԱՆՍԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ  
(ԿԻՑ ԱՌԱՐԿՈՒԹՅԱՄԸ) ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**27 հունվարի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պետի տեղակալ Ա. Օսիկյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների.

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2005 թվականի նոյեմբերի 25-ին Մոսկվայում ստորագրված՝ Ավտոտրանսպորտային միջոցների հափշտակումների դեմ պայքարի եւ դրանց վերադարձի ապահովման գործում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին համաձայնագրում (կից

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

առարկությանը) ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի դիմումն է՝ մուտքագրված 2010 թվականի հունվարի 11-ին:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի բացատրությունները, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Համաձայնագիրն ստորագրվել է 2005 թվականի նոյեմբերի 25-ին՝ Մոսկվայում: Հայաստանի Հանրապետության կողմից համաձայնագիրն ստորագրվել է առարկությամբ, որը վերաբերում է Ադրբեյջանի Հանրապետության կողմից սույն համաձայնագրի վավերացման ընթացքում կատարված վերապահմանը:

Համաձայնագրի նպատակն է ավտոտրանսպորտային միջոցների հափշտակումների կանխման եւ դրանց վերադարձի ապահովման համար համաձայնեցված միջոցների իրականացումը:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է հետեւյալ պարտավորությունները.

- պահպանելով միջազգային պարտավորությունները եւ ՀՀ օրենսդրությունը՝ համագործակցել մյուս Կողմերի հետ ավտոտրանսպորտային միջոցների հափշտակման հետ կապված հանցագործությունների մասին նախազգուշացման, հայտնաբերման, կանխման, բացահայտման եւ քննության, հետախուզման եւ վերադարձման գործում,

- իրականացնել համագործակցություն ՀՀ իրավասու մարմինների միջոցով,

- ավտոտրանսպորտային միջոցների հափշտակումների կանխման, դրանց հետախուզման եւ վերադարձի ապահովման նպատակով ապահովել ավտոտրանսպորտային միջոցների մասին տեղեկատվական բազայի առկայությունը եւ դրանում ընդգրկված տվյալների օպերատիվ տրամադրումը մյուս Կողմերի իրավասու մարմինների հայցի հիման վրա,

- հափշտակված ավտոտրանսպորտային միջոցի ՀՀ տարածքում հայտնաբերելու, կալանքի, առգրավման կամ արգելանքի դեպքում ՀՀ իրավասու մարմինը պարտավոր է 20 օրվա ընթացքում այդ մասին գրավոր ծանուցել մյուս Կողմի իրավասու մարմնին, որի վարույթում գտնվում է քրեական գործը,

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

- հափշտակված ավտոտրանսպորտային միջոցը հայտնաբերած կամ կալանած ՀՀ իրավասու մարմինը պարտավոր է ձեռնարկել համապատասխան միջոցներ տվյալ ավտոտրանսպորտային միջոցի պահպանվածությունն ապահովելու համար եւ չօգտագործել կամ չտնօրինել այն,

- որպես հայցվող Կողմ, ՀՀ կենտրոնական իրավասու մարմինը պարտավոր է ավտոտրանսպորտային միջոցը վերադարձնելու մասին հայցն ստանալու օրվանից 30 օրվա ընթացքում այն քննարկել եւ դրա արդյունքների մասին տեղեկացնել հայցող Կողմի կենտրոնական իրավասու մարմնին, իսկ ավտոտրանսպորտային միջոցը վերադարձնելու մասին որոշում կայացնելիս՝ 15 օրվա ընթացքում այդ մասին տեղեկացնել հայցող Կողմի կենտրոնական իրավասու մարմնին,

- ապահովել, որպեսզի հայտնաբերված կամ կալանված ավտոտրանսպորտային միջոցը հանձնվի հայցող Կողմի ներկայացուցչին՝ հայցող Կողմի կենտրոնական իրավասու մարմնի կողմից տրված՝ նրա լիազորությունները հաստատող փաստաթուղթ ներկայացնելու դեպքում,

- ապահովել մյուս Կողմից ստացված տեղեկությունների գաղտնիությունը, եթե հայցող Կողմն անցանկալի է համարում դրանց բովանդակության հրապարակումը, իսկ այդ տեղեկությունները երրորդ կողմին փոխանցելու անհրաժեշտության դեպքում այն կատարել միայն այդ տեղեկությունները տրամադրած Կողմի գրավոր համաձայնությունն ստանալու պարագայում,

- հայցի կատարումը մերժելու մասին անհապաղ՝ մերժման պատճառների նշումով, գրավոր ծանուցել հայցող Կողմի կենտրոնական իրավասու մարմնին,

- մյուս Կողմի կենտրոնական իրավասու մարմնի կողմից տրված փաստաթղթի ներկայացման դեպքում ապահովել, որ վերադարձվող ավտոտրանսպորտային միջոցներից չզանձվեն մաքսատուրքեր, հարկեր, ակցիզներ, գանձումներ, այլ վճարումներ,

- որպես հայցվող Կողմ հոգալ ավտոտրանսպորտային միջոցը կալանելու եւ պահելու հետ կապված ծախսերը, իսկ որպես հայցող Կողմ ապահովել, որպեսզի ՀՀ իրավասու մարմինը հոգա ավտոտրանսպորտային միջոցը ՀՀ տարածք վերադարձնելու հետ կապված ծախսերը,

- դադարեցնել հափշտակված ավտոտրանսպորտային միջոցի հետախուզումն այն նախաձեռնող Կողմի իրավասու մարմնի որոշմամբ:

3. Համաձայնագրով նախատեսվում է, որ Կողմերը համագործակցություն իրականացնելիս որպես աշխատանքային լեզու օգտագործում են ռուսերենը:

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

4. Համաձայնագրում նախատեսված են դրույթներ՝ դրանում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու, ինչպես նաեւ համաձայնագրի ուժի մեջ մտնելու եւ դադարելու վերաբերյալ:

5. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները ՀՀ Սահմանադրության 9-րդ հոդվածին համահունչ ապահովում են Կողմերի միջեւ արտաքին հարաբերությունների իրականացումը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2005 թվականի նոյեմբերի 25-ին Մոսկվայում ստորագրված՝ Ավտոտրանսպորտային միջոցների հափշտակումների դեմ պայքարի եւ դրանց վերադարձի ապահովման գործում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին համաձայնագրում (կից առարկությամբ) ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**27 հունվարի 2010 թվականի  
ՍԳՈ-863**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ  
151 ԵՎ 152-ՐԳ ՀՈԳՎԱԾՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՍԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**5 փետրվարի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Մ. Թոփուզյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ դիմողի՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Կ. Մեծլումյանի, պատասխանող կողմի՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 151 եւ 152-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության՝ 09.09.2009թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը, օրենսդրության այլ ակտեր եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2007թ. նոյեմբերի 28-ին, ՀՀ Նախագահի կողմից այն ստորագրվել է 2007 թվականի դեկտեմբերի 10-ին եւ ուժի մեջ է մտել 2008 թվականի հունվարի 1-ից:

Օրենսգրքի՝ «Դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերի քննության կարգը» վերտառությամբ վիճարկվող 151-րդ հոդվածը սահմանում է.

«Վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերը հարուցվում են օրենքով վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ կազմելու լիազորություն ունեցող մարմինների եւ պաշտոնատար անձանց (այսուհետ՝ իրավասու մարմիններ) հայցադիմումների հիման վրա»:

Օրենսգրքի վիճարկվող 152-րդ հոդվածը սահմանում է.

«1. Ֆիզիկական, պաշտոնատար կամ իրավաբանական անձին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին հայցադիմումը, ի լրումն սույն օրենսգրքի 72-րդ հոդվածով ներկայացվող պահանջների, պետք է նաեւ ներառի՝

1) վարչական իրավախախտման մասին արձանագրության կազմման համար հիմք հանդիսացած գործողությունների կատարման վայրը եւ ժամանակը.

2) վարչական իրավախախտման մասին արձանագրությունը կազմած անձի պաշտոնը, անունը, ազգանունը.

3) տեղեկություններ այն անձի մասին, որի նկատմամբ կազմվել է վարչական իրավախախտումների մասին արձանագրությունը.

4) այն օրենքի դրույթները, որոնք վարչական պատասխանատվություն են նախատեսում վարչական իրավախախտման մասին արձանագրության կազմման համար հիմք հանդիսացած գործողությունների կատարման համար.

5) դիմողի պահանջը վարչական պատասխանատվության ենթարկելու մասին:

2. Դիմումին կցվում են վարչական իրավախախտման մասին արձանագրությունը եւ արձանագրությանը կցվող փաստաթղթերը»:

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին. «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ դիմող) հայցով դիմել է ՀՀ վարչական դատարան ընդդեմ «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի եւ վերջինիս տնօրենի՝ ՊՈԱԿ-ի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու, որպես հետեւանք տեղեկատվություն տրամադրել պարտադրելու եւ ՊՈԱԿ-ի տնօրենին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջներով:

ՀՀ վարչական դատարանը 14.04.2009թ. որոշմամբ հայցադիմումը վարչական դատարանին ընդդատյա մասով՝ վարույթ է ընդունել, իսկ ՊՈԱԿ-ի տնօրենին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասով՝ հայցադիմումի ընդունումը մերժել: Դիմողը վարչական դատարանի այս որոշումը բողոքարկել է: ՀՀ վարչական դատարանի 11.05.2009թ. որոշմամբ վարչական դատարանը բողոքը մերժել է: Նշված որոշումը բողոքարկվել է ՀՀ վճռաբեկ դատարան: Վերջինս իր՝ 12.08.2009թ. որոշմամբ մերժել է դիմողի վճռաբեկ բողոքը: Ինչպես վարչական դատարանի, այնպես էլ վճռաբեկ դատարանի որոշումներում այն դիրքորոշումն է արտահայտվել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 151 եւ 152-րդ հոդվածների համաձայն վարչական դատարանում վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործեր կարող են հարուցվել միայն օրենքով վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ կազմելու լիազորություն ունեցող մարմինների եւ պաշտոնատար անձանց հայցադիմումների հիման վրա:

3. Վիճարկվող դրույթների՝ ՀՀ Սահմանադրությանը չհամապատասխանելու առնչությամբ դիմողը բերում է մի շարք փաստարկներ: Հատկապես կարելի է նշել, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.7-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում պաշտոնատար անձանց կողմից տեղեկություն տալու իրենց պարտականությունը չկատարելու համար: Նույն օրենսգրքի 223-րդ հոդվածի համաձայն՝ նշված իրավախախտման համար պաշտոնատար անձին վարչական պատասխանատվության ենթարկելու իրավասու մարմինը դատարանն է: Վարչական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածը պաշտոնատար անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու հայցադիմումով վարչական դատարան դիմելու իրավունք վերապահում է միայն օրենքով վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ կազմելու լիազորություն ունեցող մարմինների եւ պաշտոնատար անձանց՝ նման իրավունք չվերապահելով նաեւ անձանց, ում իրավունքները խախտվել են տվյալ վարչական իրավախախտմամբ: Ըստ

դիմողի՝ Վարչական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածը, այն-քանով, որքանով հնարավորություն չի տալիս տեղեկատվությունը տալու պարտականությունը չկատարած պաշտոնատար անձին վարչական պատասխանատվության ենթարկելու գործ հարուցել նաև տուժողի հայցադիմումի հիման վրա, խախտում է ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներով երաշխավորված դատական պաշտպանության արդյունավետ միջոցի եւ խախտված իրավունքը վերականգնելու ու դատարանի կողմից իր գործը ողջամիտ ժամկետում քննելու իրավունքը:

Ինչ վերաբերում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի ենթադրյալ հակասահմանադրականությանը, ապա դիմողը փաստարկում է, որ այնպիսի պայմաններում, երբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի ինչպես 189.7-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման, այնպես էլ օրենսգրքի 223-րդ հոդվածում նշված մի շարք իրավախախտումների վերաբերյալ արձանագրություն կազմելու լիազորություն ունեցող իրավասու մարմին նախատեսված չէ, վիճարկվող հոդվածով սահմանված՝ հայցադիմումում իրավախախտման վերաբերյալ արձանագրության մասին տեղեկություններ ներառելու եւ հայցադիմումին նշված արձանագրությունը կցելու պահանջով դատարան դիմող անձի համար սահմանվում է մի պարտականություն, որն առկա օրենսդրական դաշտում հնարավոր չէ կատարել: Որպես փաստարկ ներկայացվում է, որ 2005-2009թթ. ընթացքում ՀՀ դատարանները Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.7-րդ հոդվածով որեւէ պաշտոնատար անձի պատասխանատվության չեն ենթարկել: Նշված պատճառաբանությամբ դիմողը գտնում է, որ օրենսգրքի 152-րդ հոդվածը եւս հակասում է ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածների պահանջներին:

4. Պատասխանողի պնդմամբ՝ դիմող կողմն իր հիմնավորումներում շփոթում է «խախտված իրավունքը վերականգնելու» եւ «պաշտոնատար անձին վարչական պատասխանատվության ենթարկելու»՝ էությամբ միմյանցից տարբեր իրավական նշանակություն ունեցող հասկացությունները: Ըստ պատասխանողի՝ վիճարկվող հոդվածները չեն շոշափում դիմողի իրավունքների դատական պաշտպանության իրավունքը, քանի որ ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածների, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 14, 15 եւ 17-րդ հոդվածների, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի համակարգային վերլուծությունը վկայում է, որ վարչական իրավախախտում կատարած պաշտոնատար անձին վարչական պատասխանատվության ենթարկելը չի դիտարկվում որպես քաղաքացիական իրավունքների պաշտպանության եղանակ:

Պատասխանողը գտնում է, որ պաշտոնատար անձին վարչական պատասխանատվության ենթարկելու իրավական հնարավորությունը չի կարող համարվել անձի խախտված իրավունքների վերականգնման բաղադրատարր:

Միաժամանակ, պատասխանողը գտնում է, որ առկա է օրենքի բաց այն առումով, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում բացակայում են պաշտոնատար անձանց վարչական պատասխանատվության գործերի ենթակայության մասին համապատասխան դրույթներ»:

5. Սույն գործի քննության շրջանակներում հարկ է պարզել, թե արդյո՞ք անձի իրավունքները խախտած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի պաշտոնատար անձին դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելը հանդիսանում է անձի իրավունքի դատական պաշտպանության բաղադրատարր: Այս կապակցությամբ հարկ է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վիճարկվող հոդվածները դիտարկել վարչական պատասխանատվության նպատակի, օրենսգրքով նախատեսված ողջ իրավակարգավորման հիմքում ընկած տրամաբանության, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի, ինչպես նաև «անձի խախտված իրավունքների վերականգնում» հասկացության բովանդակության համատեքստում:

Նման համադրումը վկայում է, որ վարչական պատասխանատվությունը՝ ընդհանրապես, եւ վարչական պատասխանատվության միջոց հանդիսացող վարչական տույժը՝ մասնավորապես, հետապնդում են այլ նպատակ, քան անձի խախտված իրավունքի դատական կարգով վերականգնումն է: Վարչական պատասխանատվության նպատակն առավելապես կրում է հանրային բնույթ, իրավախախտ անձը պատասխանատվություն է կրում հասարակության, այլ ոչ թե մասնավոր անձի առջեւ, վարչական պատասխանատվությունն առնչվում է ոչ այնքան մասնավոր, որքան հանրային շահերին: Իսկ հանրային իրավահարաբերությունների ոլորտում մասնավոր շահերի պաշտպանության նպատակով սահմանված է այլ կարգ՝ հաշվի առնելով վարչադատավարական իրավահարաբերությունների առանձնահատկությունները, վարչաիրավական հարաբերությունների հետեւանքով խախտված իրավունքների վերականգնման կարգի առանձնահատկությունները, խախտված իրավունքների փաստացի վերականգնելիության հնարավորությունն ու աստիճանը:

Վարչական դատավարության օրենսգրքի համակարգային վերլուծությունը, մասնավորապես, օրենսգրքի 1-ին հոդվածով սահմանված՝ օրենսգրքի իրավակարգավորման առարկայի, օրենսգրքով սահմանված՝

ընդհանուր եւ հատուկ վարույթների վերաբերյալ դրույթների, հայցատեսակների, օրենսգրքի 3-րդ հոդվածով սահմանված՝ վարչական դատարանի միջոցով անձի իրավունքների դատական պաշտպանության շրջանակների ուսումնասիրությունը վկայում է, որ օրենսգրքով սահմանված ողջ իրավակարգավորումը հիմնվում է այն տրամաբանության վրա, որ հանրային իրավահարաբերությունների ոլորտում անձանց իրավունքների եւ օրինական շահերի դատական պաշտպանության ինստիտուտը տարանջատված է անձանց՝ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտից: Այսինքն՝ օրենսգրքով օրենսդիրը սահմանել է իրավակարգավորման երկու՝ միմյանցից տարբերվող ուղղություն, որոնք վերաբերում են համապատասխանաբար՝ հանրային իրավահարաբերությունների ոլորտում անձանց իրավունքների եւ օրինական շահերի դատական պաշտպանության ինստիտուտին եւ անձանց՝ դատական կարգով վարչական պատասխանատվության ինստիտուտին: Իր հերթին, նշված տրամաբանությունը բխում է այն օբյեկտիվ իրողությունից, որ առաջին դեպքում իրավախախտման աղբյուրը պետությունն է, մյուս դեպքում՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձը: Այս տրամաբանությանը համապատասխան՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը սահմանում է այն հայցատեսակները, որոնց միջոցով անձը վարչական դատարանում իրացնում է վարչական մարմնի կողմից խախտված իր իրավունքների պաշտպանությունը: Այն է՝ վիճարկման հայց (65), պարտավորեցման հայց (66), գործողության կատարման հայց (67) եւ ճանաչման հայց (68): Սահմանվում են նաեւ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց նորմատիվ իրավական ակտերի վիճարկման վերաբերյալ դրույթներ, որոնց միջոցով ապահովվում է վարչական մարմնի գործողությամբ (անգործությամբ) կամ վարչական ակտով, ինչպես նաեւ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց նորմատիվ իրավական ակտերի՝ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտերին կամ Սահմանադրությանը հակասելու հետեւանքով խախտված իրավունքների դատական կարգով վերականգնումը:

Միաժամանակ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածով սահմանված իրավակարգավորման տրամաբանությանը համահունչ, Վարչական դատավարության օրենսգրքով սահմանվում է այն հայցադիմումների քննության կարգը (գլուխներ 26 եւ 27), որոնք վերաբերում են օրենսգրքով սահմանված իրավակարգավորման երկրորդ ուղղությանը, այն է՝ անձանց՝ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտին, որոնց միջոցով վարչական մարմինները դատարանի միջոցով հանրային շահը պաշտպանում են իրավախախտ ան-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

ձանցից: Օրենսգրքի վիճարկվող 151-րդ հոդվածով, օրենսգրքի 1-ին հոդվածին եւ 3-րդ հոդվածի երկրորդ մասին համահունչ, որով որպես վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով դատարան դիմելու իրավասու սուբյեկտ են դիտարկվում միայն վարչական մարմինները կամ դրանց պաշտոնատար անձինք, վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերի հարուցման հիմք են համարվում իրավասու մարմինների եւ պաշտոնատար անձանց հայցադիմումները:

Ինչ վերաբերում է «անձի խախտված իրավունքների վերականգնում» հասկացության բովանդակությանը, ապա անձի խախտված իրավունքը վերականգնված է համարվում այն դեպքում, երբ վերականգնվում է մինչեւ իրավախախտման պահը գոյություն ունեցող իրավիճակը կամ վերացվում է իրավունքի իրացմանը խոչընդոտող հանգամանքը: Տվյալ դեպքում պաշտոնատար անձի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու եւ նրան տեղեկատվություն տրամադրելու արդյունքում դիմողը հնարավորություն է ստացել իրացնել տեղեկատվություն ստանալու իր իրավունքը:

Ելնելով վերոշարադրյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական կարգով անձանց, այդ թվում՝ անձի իրավունքը խախտած պաշտոնատար անձանց վարչական պատասխանատվության ենթարկելը չի հանդիսանում անձի խախտված իրավունքների պարտադիր բաղադրատարր եւ, հետեւաբար, անձանց՝ վարչական պատասխանատվության ենթարկելու հայցադիմումով դատարան դիմելու իրավասություն չվերապահելը չի կարող խոչընդոտել այդ անձի՝ դատարանի մատչելիության եւ դատական պաշտպանության, դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքների իրացմանը, եւ խնդրո առարկա հարցով դատարան դիմելու իրավասությունը բացառապես վարչական մարմիններին եւ դրանց պաշտոնատար անձանց վերապահելն իրավաչափ է ու օրենսգրքի իրավակարգավորման հիմքում ընկած տրամաբանության շրջանակներում է:

Նման դիրքորոշման մասին կարող է վկայել նաեւ այն փաստը, որ եվրոպական երկրներում կամ նախատեսված է վարչական պատասխանատվության միայն արտադատարանական կարգ, կամ առկա է դատական կարգով վարչական պատասխանատվության ինստիտուտից հրաժարվելու միտում:

6. Նկատի ունենալով դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտի հարաբերակցությունը հանրային շահերի պաշտպանության խնդրի հետ, հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի դրույթները, սահմանադրական դատարանը սույն գործի շրջանակներում հարկ է համարում

նաեւ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթները դիտարկել հանրային շահերի պաշտպանության եւ իրավական անվտանգության տեսանկյունից: Այս կապակցությամբ հարկ է վիճարկվող դրույթները դիտարկել օրենսգրքի մյուս հոդվածների, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի հետ համակարգային փոխկապակցության մեջ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի ուսումնասիրությունից բխում է, որ նշված օրենսգրքով նախատեսված է անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու երկու կարգ՝ արտադատարանական, որն իրականացվում է նույն օրենսգրքով սահմանված՝ կոնկրետ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց կողմից, եւ դատական, որն իրականացվում է դատարանների կողմից:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 223-րդ հոդվածը մատնանշում է նույն օրենսգրքի այն բոլոր հոդվածները, որոնցով նախատեսված իրավախախտումների համար նախատեսվում է դատական կարգով վարչական պատասխանատվություն:

Վարչական դատավարության օրենսգրքի՝ վիճարկվող հոդվածները ներառող 26-րդ գլխի եւ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի դրույթների համակարգային վերլուծությունը վկայում է, որ անձին դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխի իրավակարգավորումը սահմանելիս չի դրսևորվել համակարգային մոտեցում: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով հստակ սահմանված չեն բոլոր այն կոնկրետ վարչական մարմիններն ու դրանց պաշտոնատար անձինք, որոնք իրավասու են վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմել եւ այն ներկայացնել դատարան՝ անձանց դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու նպատակով՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 223-րդ հոդվածում մատնանշված հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումները կատարելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ **ՀՀ իրավական համակարգում առկա է իրավակարգավորման բաց, ինչը թույլ չի տալիս պետությանն իրականացնել վարչական իրավահարաբերությունների ոլորտում օրինականության նկատմամբ վերահսկողության եւ հանրային շահերի պաշտպանության իր գործառույթները, ապահովել առանձին վարչական իրավախախտումների համար ինչպես ֆիզիկական անձանց, այնպես էլ պաշտոնատար անձանց վարչական պա-**

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

տասխանատվության անխուսափելիությունը, դրանով իսկ երաշխավորելու նաեւ իրավունքների պաշտպանության արդյունավետությունը: Դրանասին է վկայում նաեւ այն փաստը, որ չնայած 1995-2007 թվականներին ավելի քան 10 անգամ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 223-րդ հոդվածում փոփոխություններ են կատարվել, սակայն մինչ օրս շարունակում է տեղ գտնել «**ՀՀ գերագույն դատարանի դատավորները քննում են...**» դրույթը:

Իրավակարգավորման նշված բացը, սակայն, պայմանավորված է ոչ թե ինքնին օրենսգրքի վիճարկվող դրույթներով, այլ դատական կարգով վարչական պատասխանատվության ինստիտուտի ոչ ամբողջական իրավակարգավորմամբ, որի հաղթահարումը ՀՀ Ազգային ժողովի իրավասության հարցն է: Իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի եւ սահմանադրական դատարանի իրավասությունները դիտարկելով իշխանությունների տարանջատման սկզբունքի համատեքստում՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ **նորմատիվ պատվիրանի բացակայությամբ**, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք:

Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Ազգային ժողովի խնդիրն է լրացնել նշված իրավունքի բացը՝ ապահովելով օրենքի իրացման գործունե կառուցակարգ, վարչական իրավախախտումների համար պաշտոնատար եւ այլ անձանց վարչական պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի գործադրման իրական երաշխիքներ:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 6-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:
2. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:
3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**5 փետրվարի 2010 թվականի  
ՍԴՈ-864**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՅԻ ՍԱՄՎԵԼ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
«ՁԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԳԱՄՆԵՐԻ  
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 6 ԵՎ 8-ՐԴ ՀՈԳՎԱԾՆԵՐԻ,  
«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 9-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ ԵՐՐՈՐԳ ՄԱՍԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. երեսան**

**10 փետրվարի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (գեկուցող), Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ դիմող Ս. Հովհաննիսյանի, գործով որպես պատասխանող ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Սամվել Հովհաննիսյանի դիմումի հիման վրա՝ «Ձինժառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6 եւ 8-րդ հոդվածների, «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ • ՏԵՂԵԿԱԿԻՐ • 4(57)2010  
64

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

հողվածի երրորդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Ս. Հովհաննիսյանի՝ 15.10.2009թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմի 2009 թվականի հոկտեմբերի 30-ի որոշմամբ «Զինձառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 6 եւ 8-րդ հոդվածների, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի եւ 52-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ Ս. Հովհաննիսյանի դիմումը քննության է ընդունվել մասնակի. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ դիմումի քննությունը մերժվել է՝ վիճարկվող դրույթը դիմողի նկատմամբ կիրառված չլինելու պատճառաբանությամբ:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով «Զինձառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին», «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքները եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Զինձառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հոկտեմբերի 27-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի նոյեմբերի 25-ին եւ ուժի մեջ է մտել 1998 թվականի նոյեմբերի 30-ին:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2002 թվականի նոյեմբերի 19-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2003 թվականի մարտի 31-ին եւ ուժի մեջ է մտել 2003 թվականի ապրիլի 10-ին:

«Զինձառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը սահմանում է.

«Հողված 6. Զինձառայողներին եւ նրանց ընտանիքների անդամներին տրվող պետական կենսաթոշակների տեսակները

Զինձառայողներին նշանակվում են պետական կենսաթոշակներ՝  
ա) երկարամյա ծառայության համար.

բ) հաշմանդամության համար:

Զոհված (մահացած) զինձառայողների ընտանիքների անդամներին նշանակվում է սոցիալական կենսաթոշակ՝ կերակրողին կորցնելու դեպքում»:

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

«Ձինժառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը սահմանում է.

«Հոդված 8. Կենսաթոշակի ընտրության իրավունքը

Պետական տարբեր կենսաթոշակների իրավունք ունեցող անձին իր ընտրությամբ նշանակվում է մեկ կենսաթոշակ»:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «Պետական տարբեր կենսաթոշակների իրավունք ունեցող անձին իր ընտրությամբ նշանակվում է մեկ կենսաթոշակ»:

2. Զննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է նրան, որ դիմողը 1978 թվականի օգոստոսի 31-ից մինչև 1996 թվականի նոյեմբերի 2-ը ծառայել է ՀՀ ոստիկանության համակարգում: 1998 թվականի հունվարի 7-ից մինչև 2007 թվականի հուլիսի 23-ն աշխատել է ՀՀ դատախազության համակարգում եւ զբաղեցրել ՀՀ զինվորական դատախազության ՀԿԳ քննիչի պաշտոն: 2007 թվականի հուլիսի 23-ին սեփական դիմումի համաձայն ազատվել է աշխատանքից եւ նույն օրն էլ ծառայության է անցել ՀՀ ոստիկանության գլխավոր քննչական վարչությունում՝ որպես ՀԿԳ ավագ քննիչ:

2008 թվականի մարտի 18-ին ազատվել է աշխատանքից եւ անցել երկարամյա ծառայության կենսաթոշակի: 2008 թվականի ապրիլի 18-ին դիմել է ՀՀ գլխավոր դատախազին՝ ոստիկանության երկարամյա ծառայության կենսաթոշակից հրաժարվելու եւ դատախազության երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու խնդրանքով, ինչը մերժվել է այն հիմնավորմամբ, որ ինչպես ոստիկանության ծառայողների, այնպես էլ **դատախազության աշխատողների թոշակավորումը կատարվում է** «Ձինժառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքով, եւ հիմքեր չկան ՀՀ դատախազության համակարգից կենսաթոշակի անցնելու համար:

Դիմողը 2008 թվականի հունիսի 2-ին դիմել է ՀՀ վարչական դատարան՝ ի թիվս այլոց, ՀՀ դատախազության անգործությունը վիճարկելու եւ ՀՀ դատախազությանը ոստիկանության երկարամյա ծառայության կենսաթոշակը դատախազության երկարամյա ծառայության կենսաթոշակով փոխելուն պարտավորեցնելու պահանջով, ինչը ՀՀ վարչական դատարանի 02.06.2009թ. վճռով մերժվել է: Վարչական դատարանը ՀՀ դատախազությանը ոստիկանության երկարամյա ծառայության կենսաթոշակը դատախազության երկարամյա ծառայության կենսաթոշակով փոխելուն պարտավորեցնելու պահանջի մասով մերժումը պատճառաբանել է նրանով, որ կենսաթոշակների տեսակները սահմանված են «Ձինժառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության

մասին» եւ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքներով, հայցվորի պահանջը վերաբերում է **ոչ թե կենսաթոշակի տեսակը փոխելուն**, այլ մեկ համակարգի փոխարեն մյուս համակարգից **նույն տեսակի** կենսաթոշակ նշանակելուն, եւ կենսաթոշակը մեկ համակարգից մյուս համակարգ տեղափոխելը **չի նշանակում կենսաթոշակի տեսակը փոխել**:

Վերը նշված վճռի դեմ դիմողը վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ վճռաբեկ դատարան: Վերջինս, վերահաստատելով ՀՀ վարչական դատարանի եզրահանգումները, իր՝ 29.07.2009թ. որոշմամբ վերադարձրել է վճռաբեկ բողոքը:

3. Դիմողը գտնում է, որ Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ոստիկանության, ազգային անվտանգության, արտակարգ իրավիճակների հանրապետական գործադիր մարմինների համակարգի ծառայողների համար սահմանված երկարամյա ծառայության համար կենսաթոշակը **երկարամյա ծառայության համար կենսաթոշակի տարբեր տեսակներ են**: Միաժամանակ դիմողը ՀՀ եւ ՌԴ կենսաթոշակային ապահովության բնագավառը կարգավորող օրենսդրական ակտերի համեմատական վերլուծության արդյունքում գտնում է, որ «Ձինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 6 եւ 8-րդ հոդվածները, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասը չեն համապատասխանում իրավական որոշակիության պահանջներին, ինչը հնարավորություն է ընձեռում, որպեսզի վարչական եւ դատական մարմիններն օրենքի մեկնաբանման եւ կիրառման հարցում ցուցաբերեն կամայական մոտեցում:

«Ձինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի առնչությամբ դիմողը գտնում է, որ նշված հոդվածը երկարամյա ծառայության համար կենսաթոշակ ստանալու իրավունքը վերապահել է բացառապես զինծառայողներին, ինչի կապակցությամբ այն ներքին հակասության մեջ է գտնվում նույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի հետ, որը երկարամյա ծառայության համար կենսաթոշակ ստանալու իրավունքը վերապահել է Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ոստիկանության, ազգային անվտանգության, արտակարգ իրավիճակների հանրապետական գործադիր մարմինների ծառայողներին: Դրա հետեւանքով, ըստ դիմողի, առկա է օրենսդրական բաց, որը դրսեւորվում է նրանում, որ «Ձինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը հնարավորություն չի ընձեռում Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ոստիկանության, ազգային անվտանգության, արտակարգ իրավիճակների հանրապետական գործադիր

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

մարմինների համակարգի ծառայողների համար սահմանված երկարամյա ծառայության համար կենսաթոշակն առանձին-առանձին, ըստ համապատասխան համակարգերի, դիտարկել որպես երկարամյա ծառայության կենսաթոշակի տարբեր տեսակներ:

«Ջինժառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի եւ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի առնչությամբ դիմողը գտնում է, որ նշված դրույթների իրավական անորոշության հետեւանքով հնարավոր չէ կանխատեսել, թե պետական տարբեր կենսաթոշակների իրավունք ունեցող անձին երբ է տրվում պետական տարբեր կենսաթոշակների միջեւ ընտրություն կատարելու իրավունք՝ կենսաթոշակ նշանակելիս, թե՞ նաեւ կենսաթոշակ նշանակվելուց հետո, եթե կենսաթոշակի անցնելուց հետո անձը շարունակում է աշխատել եւ այդ ընթացքում ձեռք է բերում մեկ այլ տեսակի կենսաթոշակի իրավունք: Դիմողը գտնում է, որ տարբեր կենսաթոշակի միջեւ ընտրություն կատարելու իրավունքը պետք է տարածվի վերը նշված բոլոր դեպքերի վրա:

Որպես իրավակիրառական պրակտիկայում վիճարկվող նորմերի իրավական անորոշության հետեւանքով դրանց կամայական մեկնաբանության առկայության ապացույց դիմողը վկայակոչում է իր գործով ՀՀ վարչական դատարանի 02.06.2009թ. կայացրած վճիռը եւ նույն գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.07.2009թ.՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը, որով ՀՀ վճռաբեկ դատարանը վերահաստատել է վարչական դատարանի եզրահանգումները:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկների դեմ, գտնում է, որ դիմողի բարձրացրած հարցերը հիմնականում վերաբերում են իրավական ակտերի մեկնաբանության հետ կապված խնդիրների, եւ պետք է դիտարկվեն այդ տեսանկյունից: «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասը հստակ է եւ դրանում՝ «պետական տարբեր կենսաթոշակների իրավունք ունեցող անձ» հասկացությունը վկայում է, որ խոսքը վերաբերում է այն դեպքին, երբ անձը դեռ չի իրացրել իր պետական կենսաթոշակ ստանալու իրավունքը:

Կենսաթոշակի իրավունքը հանդիսանում է կենսաթոշակ ստանալու իրավունք ձեռք բերած անձի գույքային իրավունք: Այդ գույքային իրավունքի իրացման դեպքում անձը կորցնում է այդ՝ արդեն իրացրած իրավունքը, «...փոխարենը ձեռք բերում այլ իրավունք՝ գույք»: Դիմողը նշված գույքային իրավունքն իրացրել է կենսաթոշակ ստանալու համար ներկայացրած դիմումի բավարարմամբ:

Հիմք ընդունելով «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի

11-րդ հոդվածով սահմանված՝ կենսաթոշակի տեսակները՝ պատասխանողը գտնում է, որ կենսաթոշակի տեսակի փոփոխումը ենթադրում է նշված հոդվածով սահմանված կենսաթոշակի մեկ տեսակի փոխարինումը նույն հոդվածով նախատեսված կենսաթոշակի այլ տեսակով: Մինչդեռ խնդրո առարկա դեպքում խոսքը վերաբերում է նույն տեսակի՝ երկարամյա ծառայության պետական կենսաթոշակի փոփոխման պահանջին, ինչն օրենքով չի սահմանվում:

Պատասխանողը գտնում է, որ վիճարկվող դրույթները սահմանում են պետական կենսաթոշակների տեսակները եւ պետական կենսաթոշակի տեսակը փոխելու քաղաքացու իրավունքը, հետեւաբար՝ այդ առումով այդ դրույթները չեն կարող հակասել ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդվածի պահանջներին:

5. Սույն գործի քննության շրջանակներում անհրաժեշտություն է առաջանում պարզել «պետական կենսաթոշակների տեսակներ» դրույթի իմաստը, «Ջինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքում օգտագործված՝ «զինվորական ծառայություն» հասկացության բովանդակությունը, «կենսաթոշակի ընտրության իրավունք» եւ «կենսաթոշակի տեսակը փոխելու իրավունք» հասկացությունների բովանդակությունը, «դատախազների թշակավորում» եւ «զինծառայողների թոշակավորում» հասկացությունների բովանդակային ընդհանրություններն ու տարբերությունները: Այդ կապակցությամբ հարկ է վիճարկվող հոդվածները դիտարկել «Ջինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» եւ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքների տարբեր հոդվածների, ինչպես նաեւ կենսաթոշակային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերի համատեքստում:

6. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածը սահմանում է պետական կենսաթոշակների տեսակները: Նշված հոդվածի վերլուծությունից բխում է, որ օրենսդիրը սահմանել է պետական կենսաթոշակների երկու տեսակ՝ ապահովագրական եւ սոցիալական: Այդ տեսակներից յուրաքանչյուրի համար նույն հոդվածով սահմանվել են նաեւ պետական կենսաթոշակների ենթատեսակներ: Մասնավորապես, ըստ դիտարկվող հոդվածի՝ պետական կենսաթոշակի «ապահովագրական» անվանումը կրող տեսակը ստորաբաժանված է «տարիքային», «արտոնյալ պայմաններով», «երկարամյա ծառայության», «հաշմանդամության», «կերակրողին կորցնելու դեպքում» ու «մասնակի» ենթատեսակների: Պետական կենսաթոշակի՝ «սոցիալական» անվանումը կրող տեսակն ստո-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

րաբաժանված է «ծերության», «հաշմանդամության», «կերակրողին կորցնելու դեպքում» ենթատեսակների: Նույն օրենքի 52-րդ հոդվածի ուսումնասիրությունից բխում է, որ պետական կենսաթոշակների վերը նշված ենթատեսակները եւս հանդիսանում են պետական կենսաթոշակի տեսակներ:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ պետական կենսաթոշակների նշված երկու տեսակների տարբերակման հիմքում դրված են աշխատանքային հարաբերությունները: Այսինքն՝ ապահովագրական կենսաթոշակի իրավունքը պայմանավորված է կա՛ն կենսաթոշակառուի աշխատանքային (ապահովագրական) ստաժով, կա՛ն, կախված ապահովագրական կենսաթոշակի տարատեսակների բնույթից, աշխատանքային խեղմամբ կամ մասնագիտական հիվանդությամբ կամ դրանց հետեւանքով կերակրողին կորցնելով: Իսկ սոցիալական կենսաթոշակի իրավունքը պայմանավորված է անձի՝ աշխատանքային հարաբերությունների հետեւանք չհանդիսացող հիվանդությամբ կամ դրա հետեւանքով կերակրողին կորցնելով, ինչպես նաեւ անձի տարիքով, ինչի հետեւանքով նա անկարող է դառնում իրեն ապահովել ինքնուրույն աշխատանքով եւ, միեւնույն ժամանակ, նրա աշխատանքային ստաժը չի բավարարում նրան նշանակել տարիքային ապահովագրական կենսաթոշակ:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի ուսումնասիրությունից բխում է նաեւ, որ երկարամյա ծառայության կենսաթոշակի վերաբերյալ նույն օրենքով սահմանված իրավակարգավորումը **չի վերաբերում «Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքում նշված սուբյեկտներին:**

«Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը զինծառայող է համարում Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ներքին գործերի, ազգային անվտանգության, «Հայաստանի փրկարար ծառայության»՝ «Հայաստանի փրկարար ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 112-րդ հոդվածով սահմանված դեպքերում՝ հանրապետական գործադիր մարմինների համակարգի հրամանատարական եւ շարքային անձնակազմի ծառայողներին:

«Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի վիճարկվող 6-րդ հոդվածը զինծառայողների, այն է՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ներքին գործերի, ազգային անվտանգության, «Հայաստանի փրկարար ծառայության»՝ «Հայաստանի փրկարար ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 112-րդ հոդվածով սահմանված դեպքերում՝ հանրապետական գործադիր մարմինների համակարգի հրա-

մանատարական եւ շարքային անձնակազմի ծառայողների եւ դրանց հավասարեցված անձանց համար սահմանում է պետական կենսաթոշակների հետեւյալ երկու տեսակները՝ **երկարամյա ծառայության համար եւ հաշմանդամության համար**:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ զինծառայողների համար սահմանված պետական կենսաթոշակների նշված երկու տեսակները, ի տարբերություն «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանված պետական կենսաթոշակի «ապահովագրական» եւ «սոցիալական» անվանումը կրող տեսակների, ունեն նաեւ ընդհանրություններ: Բոլոր դեպքերում, նշված ընդհանրության հիմքում դրված են միայն աշխատանքային (ծառայողական) հարաբերությունները: Տվյալ դեպքում օրենսդիրը հաշվի է առել միայն ծառայողական պարտականությունների ոչ ստանդարտ, արտակարգ, կյանքի համար վտանգավոր պայմաններում կատարման հանգամանքը՝ այս առումով հավասար եւ միասնական մոտեցում ցուցաբերելով նմանատիպ ծառայություններ իրականացնող Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ներքին գործերի, ազգային անվտանգության, Հայաստանի փրկարար ծառայության համակարգերին: Այսինքն՝ թե՛ երկարամյա ծառայության համար, թե՛ հաշմանդամության համար կենսաթոշակի իրավունքը պայմանավորված է միայն կենսաթոշակառուի աշխատանքային (ապահովագրական) ստաժով, կա՛ն, հաշմանդամության համար կենսաթոշակի դեպքում՝ ծառայության ընթացքում ձեռք բերված խեղմամբ կամ հիվանդությամբ կամ դրանց հետեւանքով կերակրողին կորցնելով:

Նկատի ունենալով տարբեր համակարգերում երկարամյա ծառայության համար կենսաթոշակի բնույթի, նշանակման ու վճարման կարգի համասեռությունը, օրենսդիրն առանձին-առանձին՝ ըստ Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ներքին գործերի, ազգային անվտանգության, Հայաստանի փրկարար ծառայության հանրապետական գործադիր մարմինների համակարգի, չի տարբերակել երկարամյա ծառայության համար կենսաթոշակի ենթատեսակներ:

7. Կենսաթոշակային ապահովության վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը քաղաքացիներին վերապահելով կենսաթոշակի ընտրության իրավունք, միաժամանակ վերջիններիս վերապահել է նաեւ կենսաթոշակի տեսակը փոխելու իրավունք: Այդ իրավունքը սահմանված է, մասնավորապես, «Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» եւ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքներով: Օրենսդրության մեջ նշված երկու ինստիտուտների տարբերակումն ինքնանպատակ չէ: «Կենսաթոշակի տեսակ փոխել» հասկա-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

ցության մեջ «փոխել» բառի առկայությունից բխում է, որ կենսաթոշակի տեսակը փոխելու իրավունքն անձի մոտ ծագում է այն ժամանակ, երբ տվյալ անձի նկատմամբ արդեն իսկ նշանակվել է կենսաթոշակ:

Ի կատարումն «Ջինժառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 20 եւ 26-րդ հոդվածների, ՀՀ կառավարությունը 12.05.2005 թվականին ընդունել է «Կենսաթոշակ ստանալու համար դիմելու, կենսաթոշակ նշանակելու (վերահաշվարկելու), կենսաթոշակի տեսակ փոխելու, կենսաթոշակ վճարելու եւ կենսաթոշակի գործ (փաստաթղթեր) վարելու կարգը հաստատելու մասին» թիվ 930-Ն որոշումը, որը, ի թիվս այլոց, պետք է սահմաներ կենսաթոշակի տեսակը փոխելու կարգը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ կառավարության տվյալ որոշումը լիարժեք չի իրացրել օրենքի պահանջը, քանի որ գործնականում հստակ չէ կենսաթոշակի տեսակը փոխելու կարգը: Նման վիճակը հետեւանք է նաեւ այն բանի, որ օրենքով հստակ սահմանված չեն «կենսաթոշակի ընտրության իրավունք», «կենսաթոշակի տեսակը փոխելու իրավունք», «կենսաթոշակի տեսակ», «կենսաթոշակի ենթատեսակ» հասկացությունները:

Առաջացել է լուրջ շփոթ նաեւ այն պատճառով, որ համակարգային մոտեցում չցուցաբերելով, «Դատախազության մասին» 22.02.2007թ. օրենքն ընդունելուց հետո պահպանվել է ՀՀ 1998թ. օրենքի 40-րդ հոդվածի այն դրույթի իրավաբանական ուժը, համաձայն որի՝ «Դատախազների եւ քննիչների թոշակավորում իրականացվում է ներքին գործերի մարմիններում ծառայություն անցնող ղեկավար կազմի անձանց համար կիրառվող պայմաններով, նորմերով եւ կարգով»: «Ջինժառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» եւ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքների՝ քննության առարկա նորմերի գործողության պայմաններում «Դատախազության մասին» ՀՀ օրենքի տվյալ նորմն իրավաչափ կարող էր լինել միայն սույն որոշման 6-րդ կետում հիշատակված համասեռության պայմաններում: Իրականում այդ պայմանը չի գործում: Գործնականում առկա են երկու տարբեր համակարգեր, որոնցում համադրելի չեն աշխատանքի ստաժը եւ կենսաթոշակի չափը, եւ որոնցից յուրաքանչյուրից դիմողը հավասար իրավունք ունի ստանալու երկարամյա ծառայության համար կենսաթոշակ:

ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 4 հոկտեմբերի 2006թ. ՄԴՈ-649 որոշման մեջ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ «Կենսաթոշակի վճարումը գործնականում սեփականությունը սեփականատիրոջը փոխանցելու միջոց է»: Նույն որոշման մեջ դատարանը միաժամանակ արձանագրել է, որ «Կենսաթոշակը սոցիալական ապահովության միջոց լինելով հանդերձ, սեփականության ձեւ է՝ նաեւ ըստ Եվրոպական դա-

տարանի նախադեպային իրավունքի»։ Հետեւաբար, պատասխանող կողմի, ինչպես նաեւ ՀՀ վարչական դատարանում պատասխանողի ներկայացուցիչների բոլոր դատողություններն առ այն, որ անձը միայն մեկ անգամ իրավունք ունի կենսաթոշակի տեսակ ընտրել եւ այն հետագայում փոփոխման ենթակա չէ, սահմանադրական դատարանը համարում է ոչ հիմնավոր՝ դիմումատուի հայցապահանջը մերժելու տեսանկյունից։ Դիմողի բարձրացրած հիմնախնդիրն ամենեւին չի առնչվում վեճի առարկա հողվածների դրույթներին, որոնք իրենց իրավակարգավորման շրջանակներում սահմանադրականության խնդիր չեն առաջացնում։ Այն վերաբերում է կենսաթոշակների նշանակման հիմնախնդրի կարգավորման տեսանկյունից երկու ոչ միասեռ համակարգերն արհեստական ձեւով միմյանց կապակցելուն։

Սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի սահմանադրական իրավունքն է պահանջել ու ստանալ իր հասանելիք երկարամյա ծառայության կենսաթոշակը՝ իր իսկ կողմից ընտրված համակարգից՝ նաեւ իր որոշումը վերանայելու հիմքով։ ՀՀ որեւէ օրենքով տվյալ հարցով անձի որոշումը փոխելու իրավունքը սահմանափակված չէ։ ՀՀ Սահմանադրությամբ եւ ՀՀ մի շարք միջազգային իրավական պարտավորություններով միանշանակ պահանջ է առաջադրված, որ իրավունքի սահմանափակումը պետք է նախատեսված լինի միայն օրենքով, լինի համաչափ, չաղավաղի իրավունքի էությունը։

Հաշվի առնելով, որ պատասխանող կողմը, ինչպես նաեւ վարչական դատարանը, վարչական դատարանում պատասխանողի ներկայացուցիչը եւ երրորդ անձինք դիմողի իրավունքի սահմանափակումը բխեցնում են «Ձինձառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի եւ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի մեկնաբանությունից, սահմանադրական դատարանը գտնում է, որ նման մեկնաբանությունը հիմնավոր չէ, չի բխում ՀՀ Սահմանադրության 1, 3, 31 եւ 83.5-րդ հոդվածների պահանջներից։

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**։

1. «Ձինձառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

6-րդ հոդվածը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. «Զինձառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածը՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան տրված բովանդակության մասով, որով սահմանափակվում է անձի իրավունքը կենսաթոշակը նշանակելուց հետո կատարել վերընտրություն, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 31 եւ 83.5-րդ հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

3. «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի երրորդ մասը՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան տրված բովանդակության մասով, որով սահմանափակվում է անձի իրավունքը կենսաթոշակը նշանակելուց հետո կատարել վերընտրություն, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 31 եւ 83.5-րդ հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**10 փետրվարի 2010 թվականի  
ՍԳՈ-865**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ՄԵԼՏԵՔՍ» ՍՊԸ-Ի ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՍԵՐԻՆԵ ՖԼՁՅԱՆԻ,  
ԻՐԻՆԱ ՕԳԱՆԵԶՈՎԱՅԻ, ԱՆՆԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ԵՎ ԱԳՆԵՍՍ  
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՊՐՔԻ 204.28-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Քաղ. Երևան**

**23 փետրվարի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.

Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուկյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (գեկուցող), Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ դիմող կողմի ներկայացուցիչներ Ա. Զեյնալյանի, Ա. Ղազարյանի եւ Կ. Մեծլումյանի, պատասխանող կողմի՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց ««Մելտեքս» ՍՊԸ-ի եւ քաղաքացիներ Սերինե Ֆլջյանի, Իրինա Օգանեզովայի, Աննա Բաղդասարյանի եւ Ազնեսա Բաղդասարյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.28-րդ հոդվածի 1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը «Մելտեքս» ՍՊԸ-ի եւ քաղաքացիներ

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ♦ 4(57)2010  
75

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԿՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Ս. Ֆլջյանի, Ի. Օզանեզովայի, Ա. Բաղդասարյանի եւ Ա. Բաղդասարյանի համապատասխանաբար՝ 19.08.2009թ., 31.08.2009թ. եւ 15.09.2009թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումներն են, որոնց հիման վրա, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածով, մինչեւ դատաքննությունն սկսվելը գործերը միավորվել են դատարանի նույն նիստում քննելու համար:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, օրենսդրության այլ ակտեր, գործում առկա մյուս փաստաթղթերը, ինչպես նաեւ սույն գործի առարկայի վերաբերյալ սահմանադրական դատարանի կայացրած որոշումները, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հունիսի 17-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի օգոստոսի 7-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

Դիմողների կողմից վիճարկվող «204.28» հոդվածը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում ներառվել է «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 2007 թվականի նոյեմբերի 28-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքով (ՀՕ-277-Ն), որը ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել է 2007 թվականի դեկտեմբերի 20-ին եւ ուժի մեջ մտել 2008 թվականի հունվարի 1-ից: 204.28-րդ հոդվածը նախատեսված էր փոփոխությունների եւ լրացումների վերաբերյալ վերոհիշյալ օրենքի 72-րդ հոդվածով, որով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը լրացվել էր «Վճիռների եւ որոշումների վերանայումը նոր հանգամանքներով» վերտառությունը կրող 3.2-րդ բաժնով: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.28-րդ հոդվածով սահմանված էր նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու արդյունքում դատարանի իրավասությունը, այդ թվում՝ դիմումն առանց բավարարման եւ նախորդ դատական ակտն ուժի մեջ թողնելու վերաբերյալ (հոդվածի 1-ին կետը):

Սույն գործով դիմող՝ քաղաքացի Սերինե Ֆլջյանի՝ 14.05.2008թ. սահմանադրական դատարանում մուտքագրված դիմումի հիման վրա՝ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 80 հոդվածի 1-ին, 4-րդ եւ 5-րդ մասերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի քննության արդյունքում, սահմանադրական դա-

տարանն իր՝ 09.09.2008 թվականի ՄԴՈ-758 որոշման եզրափակիչ մասի 5-րդ կետի համաձայն ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր է ճանաչել վերոհիշյալ օրենքի նաեւ 72-րդ հոդվածը՝ ամբողջությամբ, այդ թվում՝ սույն գործով վիճարկվող 204.28-րդ հոդվածը: Այդ նորմի իրավաբանական ուժը կորցնելը սահմանադրական դատարանի կողմից «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 15-17-րդ մասերի հիմքով չի հետաձգվել, հետեւաբար՝ կիրառման մեջ պետք է դրվեր այդ որոշման հրապարակման պահից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.28-րդ հոդվածի սահմանադրականության հարցին անդրադառնալիս սահմանադրական դատարանն իր վերոհիշյալ որոշմամբ (13-րդ կետ) գտել էր, որ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման արդյունքում նախորդ դատական ակտն ուժի մեջ թողնելու դատարանի լիազորության օրենսդրական կարգավորման դեպքում պետք է հաշվի առնվի, որ օրենքի դրույթը Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու մասին սահմանադրական դատարանի որոշման առկայության պարագայում նոր հանգամանքների հիմքով վերանայվող դատական ակտը բոլոր դեպքերում ուժի մեջ մնալ չի կարող, քանի որ այդ ակտով կիրառվել է հակասահմանադրական իրավանդորդ, հետեւաբար, այդպիսի իրավակարգավորման բացակայությամբ էլ հիմնավորվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վերոհիշյալ հոդվածի հակասությունը ՀՀ Սահմանադրությանը: Իսկ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի ուժի մեջ մտած վճռի կամ որոշման հիմքով (մասնավորապես՝ ՄԻԵԴ-ի) դատական ակտերը նոր հանգամանքներով վերանայելու իրավակարգավորման սահմանադրականության խնդրում սահմանադրական դատարանը գտել էր, որ այդ ակտերն ուժի մեջ թողնելու հարցը լուծելիս ՀՀ համապատասխան դատարանը հիմք է ընդունում այդ դատարանի վճռով (որոշմամբ) մարդու իրավունքների խախտման փաստը հաստատված կամ չհաստատված համարվելու իրողությունը:

2. Ինչպես հետեւում է գործի նյութերից, ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ 3-10 (ՏԴ) 2009թ., 3-11(ՏԴ)2009թ., 3-7(ՎԴ)2009թ. եւ 3-123(ՎԴ)2009թ. քաղաքացիական գործերով, քննելով «Մելտեքս» ՍՊԸ-ի, քաղաքացիներ Ս.Ֆլջյանի, Ի.Օզանեզովայի, Ա.Բաղդասարյանի եւ Ա.Բաղդասարյանի վճռաբեկ բողոքները՝ նոր հանգամանքների հիմքով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ տնտեսական գործերի պալատի 27.02.2004թ. թիվ 3-397(ՏԴ), 23.04.2004թ. թիվ 3-748(ՏԴ) որոշումները, ինչպես նաեւ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 30.11.2007թ., 05.02.2007թ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին», 18.06.2007թ. «Նոր հանգամանքների հիմքով որոշ-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

ման վերանայման վարույթի հարուցումը մերժելու մասին» որոշումները վերանայելու մասին, 2009թ. փետրվարի 19-ին, 2009թ. մարտի 13-ին եւ 2009թ. հուլիսի 24-ին կայացրել է սույն գործով վերջնական դատական ակտեր համարվող որոշումներ՝ կիրառելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ ՀՀ սահմանադրական դատարանի ՄԳՈ-758 որոշմամբ իրավաբանական ուժը կորցրած 204.28-րդ հոդվածի դրույթները:

Սահմանադրական դատարանի վերոհիշյալ որոշմանը հաջորդող ժամանակահատվածում ՀՀ Ազգային ժողովը 2008թ. դեկտեմբերի 26-ին ընդունված ՀՕ-233-Ն օրենքով փոփոխություններ եւ լրացումներ է կատարել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3.2-րդ բաժնում՝ կապված նոր հանգամանքներով վերանայման ենթակա դատական ակտերի տեսակները, դատական ակտերը վերանայելու իրավասություն ունեցող դատարանների կազմն ընդլայնելու հետ, սակայն 204.28-րդ հոդվածով նախատեսված իրավակարգավորումը ՀՀ Սահմանադրությանը համապատասխանեցնելու խնդրին չի անդրադարձել, ինչի արդյունքում դատական պրակտիկայում կիրառվել է հակասահմանադրական ճանաչված այդ նորմը:

3. ՀՀ Սահմանադրության 102-րդ հոդվածի համաձայն սահմանադրական դատարանի որոշումները վերջնական են: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 65-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն սահմանադրական դատարանի որոշումները դրանց ընդունման օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում, առաքվում են դատավարության կողմերին, պետական իշխանության համապատասխան մարմիններին, այդ թվում՝ ՀՀ Ազգային ժողով եւ ՀՀ վճռաբեկ դատարան, հրատարակվում են Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում եւ սահմանադրական դատարանի տեղեկագրում: Իսկ նույն օրենքի 61-րդ հոդվածի 5-րդ մասի եւ 66-րդ հոդվածի համաձայն սահմանադրական դատարանի գործով ըստ էության ընդունված որոշումները պարտադիր են բոլոր պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց համար:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործի շրջանակներում վերոհիշյալ նորմերի իրավաբանական բովանդակությունից նաեւ բխում է, որ.

- սահմանադրական դատարանի որոշումը որեւէ կերպ մեկնաբանման, վիճարկման ենթակա չէ,

- սահմանադրական դատարանի ՄԳՈ-758 որոշմանն անմիջականորեն պետք է հաջորդել ՀՀ Ազգային ժողովի օրինաստեղծ գործունեությունը՝ կապված ոչ միայն «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում

փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 2007 թվականի նոյեմբերի 28-ին ընդունված ՀՀ օրենքի (ՀՕ-277-Ն) 80 եւ 76-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3.2-րդ բաժնի 204.20 եւ 204.26-րդ հոդվածների համապատասխան նորմերը, այլեւ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 2007 թվականի նոյեմբերի 28-ին ընդունված ՀՀ վերոհիշյալ օրենքի 72-րդ հոդվածում ընդգրկված 204.28-րդ հոդվածը ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչելու հետեւանքով ուժը կորցրած ճանաչելու եւ վերջինիս նախկին իրավակարգավորումը Սահմանադրությանը համապատասխանեցնելու հետ,

- սահմանադրական դատարանի ՄԳՈ-758 որոշմանը շահագրգիռ անձանց դիմումների հիման վրա պետք է հաջորդեին իրավական հետեւանքներ (նոր հանգամանքներ)՝ հանգեցնելով օրենքով սահմանված կարգով դատական այն ակտերը վերանայելուն, որոնցով կիրառվել են Սահմանադրությանը հակասող ճանաչված՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.28-րդ հոդվածի դրույթները, ընդ որում՝ պարտադիր հաշվի առնելով նաեւ ՀՀ սահմանադրական դատարանի 2008 թվականի ապրիլի 15-ի ՄԳՈ-751 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ կապված նոր հանգամանքներով այն անձանց խախտված իրավունքները վերականգնելու անհրաժեշտության հետ, որոնց վերաբերյալ վերջնական դատական ակտի կայացման եւ տվյալ անձի նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականության հարցի վերաբերյալ այլ դիմումի (դիմումների) հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն սկսելու օրվա կամ այդ հարցի վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշման ընդունման օրվա միջեւ ընկած ժամանակահատվածը չի գերազանցում վեց ամիսը:

Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ «Ազգային ժողովի կանոնակարգ», «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքներում դեռեւս նախատեսված չէ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով օրենքը (վերջինիս դրույթը), ՀՀ Ազգային ժողովի որոշումը Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու դեպքում ՀՀ Ազգային ժողովի կողմից սահմանադրական դատարանի այդպիսի որոշումից բխող անհրաժեշտ իրավակարգավորում, որպիսի հանգամանքը կարելու է նաեւ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների կատարման վիճակի ամփոփման վերաբերյալ 2008 եւ 2009 թվականների տարեկան հաղորդումներով:

Միաժամանակ, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ, ինչպես վկայում է դատական պրակտիկան, հա-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԿՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

ճախ օրենքի այս կամ այն դրույթը ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչելու վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշումներից կամ իրավակարգավորման ընդհանուր անհրաժեշտությունից բխող օրենսդրական փոփոխությունների եւ լրացումների հետ կապված իրավատեխնիկական խնդիրների (այդ փոփոխությունները, լրացումները օրենքում ներառելու (ինկորպորացնելու)) ոչ լիարժեք լուծումը հանգեցնում է ոչ թե փոփոխված (լրացված) օրենքի, այլ դրանում կատարված փոփոխությունների եւ լրացումների վերաբերյալ օրենքի կիրառմանը, որը չի բխում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջներից եւ իրավակիրառական պրակտիկայում առաջացնում է անհստակություն:

4. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի եւ 60-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն գործի քննության ցանկացած փուլում սահմանադրական դատարանը կարճում է գործի վարույթը, եթե «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-75-րդ (այդ թվում 69-րդ հոդվածում) եւ 77-րդ հոդվածներում նշված գործերով ներկայացված որեւէ դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա է սահմանադրական դատարանի որոշումը: Սույն գործով ներկայացված դիմումներում առաջադրված հարցի վերաբերյալ առկա է սահմանադրական դատարանի նախկինում կայացված որոշումը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 19, 32 եւ 60-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. «Մելտեքս» ՍՊԸ-ի եւ քաղաքացիներ Սերիմե Ֆլջյանի, Իրինա Օգանեզովայի, Աննա Բադդասարյանի եւ Ազնեսա Բադդասարյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.28-րդ հոդվածի 1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

Արձանագրել, որ, նախ՝ ՀՀ սահմանադրական դատարանի ՍԳՈ-758 որոշման 13-րդ կետում արտահայտած իրավական դիրքորոշման եւ եզրափակիչ մասի 5-րդ կետի հիմքով ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր է ճանաչվել նաեւ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 2007 թվականի նոյեմբերի 28-ին ընդունված ՀՀ օրենքի (ՀՕ-277-Ն) 72-րդ հոդվածում ընդգրկված 204.28-րդ հոդվածը, որը ՀՀ Ազգային ժողովի կողմից

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

2008 թվականի դեկտեմբերի 26-ին ընդունված՝ ինչպես ՀՕ-233-Ն, այնպես էլ դրան հաջորդող որեւէ այլ օրենքով դեռեւս ՀՀ Սահմանադրությանը չի համապատասխանեցվել, երկրորդ՝ ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2008 թվականի ապրիլի 15-ի ՍԳՈ-751 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի պահանջների հիմքով սպառված չպետք է համարվի սույն գործի առարկայի շրջանակներում նոր հանգամանքներով իրավասու դատարան դիմելու շահագրգիռ անձանց իրավունքը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**23 փետրվարի 2010 թվականի  
ՍԳՈ-866**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2007 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ ԴԱՄԱՍԿՈՍՈՒՄ  
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՐԻԱՅԻ ԱՐԱՔԱԿԱՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ  
ԳՈՐԾԵՐՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈԽՕԳՆՈՒԹՅԱՆ  
ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**19 մարտի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի (զեկուցող), Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2007 թվականի նոյեմբերի 8-ին Դամասկոսում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Սիրիայի Արաբական Հանրապետության կառավարության միջեւ մաքսային գործերում համագործակցության եւ փոխօգնության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 09.02.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ • ՏԵՂԵԿԿԱԳԻՐ • 4(57)2010  
82

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Ա. Ալավերդյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

1. Համաձայնագիրն ստորագրվել է 2007թ. նոյեմբերի 8-ին՝ Դամասկոսում:

2. Համաձայնագրի նպատակն է մաքսային օրենսդրության խախտումների եւ թմրամիջոցների, հոգեմեդրոդուն նյութերի ապօրինի շրջանառության կանխմանն ուղղված մաքսային ծառայությունների գործողությունների արդյունավետության բարձրացումը:

Համաձայնագրով նախատեսվում է մաքսային համագործակցության զարգացում, փոխադարձ վարչական օգնության ցուցաբերում եւ այդ նպատակով տեղեկատվության փոխանակում, ինչպես նաեւ համագործակցության առանձին ձեւեր, որոնց շրջանակներում երկու կողմերի մաքսային ծառայություններն իրականացնելու են անձանց, ապրանքների եւ փոխադրամիջոցների հսկողություն, թմրամիջոցների, հոգեմեդրոդուն նյութերի եւ պրեկուրսորների ապօրինի շրջանառության դեմ ուղղված համապատասխան գործողություններ:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- ցուցաբերել փոխադարձ օգնություն մաքսային իրավախախտումները կանխելու,

հետաքննելու եւ դրանց դեմ պայքարելու նպատակով,

- մյուս կողմի մաքսային ծառայության հարցման հիման վրա տրամադրել տեղեկատվություն՝ կապված այն գործողությունների հետ, որոնք մյուս կողմի տարածքում կարող են հանգեցնել մաքսային իրավախախտումների, ինչպես նաեւ տրամադրել անհրաժեշտ տվյալներ՝ կապված ապրանքների փոխադրման եւ առաքման հետ,
- մյուս կողմի մաքսային ծառայության հարցման դեպքում՝ իրականացնել անհրաժեշտ ամբողջ հետաքննությունը, ներառյալ՝ մաքսային իրավախախտման մեջ կասկածվող անձանց հարցաքննումը, ինչպես նաեւ իրականացնել ստուգումներ, հսկողություն եւ հետաքննություն,
- համաձայնագրով սահմանված դեպքերում ստանալով տեղեկատվություն՝ ցուցաբերել փոխադարձ օգնություն, եթե դա անհրաժեշտ է մաքսային օրենսդրության ճշգրիտ կիրարկման համար,

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

- համաձայնագրի շրջանակներում ստացված տեղեկատվությունը, փաստաթղթերը եւ այլ հաղորդագրություններն օգտագործել միայն համաձայնագրի նպատակների համար եւ դրանց տալ պաշտպանության այն աստիճանը, որը գործում է ներպետական օրենսդրությամբ նմանատիպ փաստաթղթերի եւ տեղեկատվության համար,
- հոգալ համաձայնագրի կիրարկման ժամանակ առաջացած ծախսերը, եթե դրանք առաջացել են իր տարածքում, եւ հրաժարվել համաձայնագրի իրականացման ընթացքում առաջացող ծախսերի հատուցումից՝ բացառությամբ փորձագետների, վկաների եւ թարգմանիչների ծախսերի,
- իրականացնել հսկողություն այն անձանց նկատմամբ, որոնք մյուս կողմի տարածքում կատարել են մաքսային իրավախախտումներ կամ կասկածվում են դրանում,
- իրականացնել հսկողություն այն ապրանքների նկատմամբ, որոնց վերաբերյալ հայտնի են կասկածներ առ այն, որ մյուս կողմի տարածք կամ տարածքից դուրս ապօրինի փոխադրման առարկա են,
- իրականացնել հսկողություն ցանկացած փոխադրամիջոցի նկատմամբ, որոնց վերաբերյալ հայտնի է կամ կասկածներ կան, որ օգտագործվել են մյուս կողմի տարածքում մաքսային իրավախախտումներ կատարելիս,
- աջակցել թմրամիջոցների, հոգեմեդրոգործուն նյութերի եւ պրեկուրսորների ապօրինի շրջանառության կանխման եւ հետաքննության հարցերում՝ տրամադրելով համապատասխան ողջ տեղեկատվությունը:

Համաձայնագրով սահմանվում է տարաձայնությունների լուծման, այն ուժի մեջ մտնելու եւ դադարեցման կարգը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2007 թվականի նոյեմբերի 8-ին Դամասկոսում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Սիրիայի Արաբական Հանրապետության կառավարության միջեւ մաքսային գործերում համագործակցության եւ փոխօգնության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**19 մարտի 2010 թվականի  
ՍԳՈ-867**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**1995 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29-ԻՆ ՄՈՆԻԵԱԼՈՒՄ  
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԱՎԻԱՅԻԱՅԻ  
ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ  
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**19 մարտի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուդյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «1995 թվականի սեպտեմբերի 29-ին Մոնրեալում ստորագրված՝ «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիայի փոփոխությանը վերաբերող արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 16.02.2010թ. դիմումը սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչու-

թյան պետ Ա. Մովսեսյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով արձանագրությունը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

«Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիայի փոփոխությանը վերաբերող արձանագրությունն (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրվել է 1995թ. սեպտեմբերի 29-ին՝ Մոնրեալում:

Արձանագրության նպատակն է նախատեսել դրույթ այն մասին, որ 1944թ. դեկտեմբերի 7-ին Չիկագոյում կնքված՝ Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին կոնվենցիայի բնագիրը լինի նաեւ արաբերենով:

Ըստ արձանագրության՝ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է, մասնավորապես.

- Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին կոնվենցիայի 94-րդ հոդվածի ա) կետի դրույթներին համապատասխան՝ արձանագրության վավերացմամբ ընդունել կոնվենցիայում առաջարկված հետեւյալ փոփոխությունը՝

կոնվենցիայի առկա տեքստի եզրափակիչ պարբերությունը փոխարինել հետեւյալով՝

«Կատարված Չիկագոյում, 1944 թվականի դեկտեմբեր ամսվա յոթերորդ օրը, անգլերենով: Սույն Կոնվենցիայի անգլերեն, արաբերեն, ֆրանսերեն, ռուսերեն եւ իսպաներեն տեքստերը հավասարապես նույնական են: Այդ տեքստերն ի պահ են հանձնվում Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության արխիվներ, իսկ դրանց հաստատված պատճեններն այդ կառավարության կողմից փոխանցվում են այն պետությունների կառավարություններ, որոնք կստորագրեն սույն Կոնվենցիան կամ կմիանան դրան: Սույն Կոնվենցիան բաց է ստորագրման համար Վաշինգտոն քաղաքում:»,

- արձանագրության վավերագիրն ի պահ հանձնել Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 1995 թվականի սեպտեմբերի 29-ին Մոնրեալում ստորագրված՝ «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիայի փո-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

փոխությանը վերաբերող արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**19 մարտի 2010 թվականի  
ՍԳՈ-868**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**1998 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՆ ՄՈՆՐԵԱԼՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
«ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԱՎԻԱՅԻԱՅԻ ՄԱՍԻՆ»  
ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ  
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**19 մարտի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուկյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի (զեկուցող),

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «1998 թվականի հոկտեմբերի 1-ին Մոնրեալում ստորագրված՝ «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիայի փոփոխությանը վերաբերող արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 17.02.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչու-

89 ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ • ՏԵՂԵԿՎԱԳԻՐ • 4(57)2010

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

թյան պետ Ա. Մովսեսյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով արձանագրությունը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. Արձանագրությունն ստորագրվել է 1998թ. հոկտեմբերի 1-ին Մոնրեալում՝ կոնվենցիայի չինարեն տարբերակը մյուս պաշտոնական լեզուներով տարբերակներին հավասարագոր եւ վավերական դարձնելու նպատակով:

2. Արձանագրությամբ նախատեսված են 1944 թվականի դեկտեմբերի 7-ին Չիկագոյում կնքված՝ Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին կոնվենցիայում (որը Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 1994թ. մարտի 29-ին՝ Գերագույն խորհրդի ՀՆ-1032-1 որոշմամբ) որոշակի փոփոխություններ:

3. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է պարտավորություն կոնվենցիայի չինարեն տարբերակը ճանաչել հավասարագոր եւ վավերական կոնվենցիայի մյուս հինգ՝ ռուսերեն, արաբերեն, անգլերեն, իսպաներեն եւ ֆրանսերեն տարբերակներին:

4. Արձանագրությամբ սահմանված են նաեւ այն ուժի մեջ մտնելու եւ կողմերին ծանուցելու կարգն ու պայմանները:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

1. 1998 թվականի հոկտեմբերի 1-ին Մոնրեալում ստորագրված՝ «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիայի փոփոխությանը վերաբերող արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**19 մարտի 2010 թվականի  
ՍԳՈ-869**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՌՈՔԵՐՏ ՍԵՂԵՐԴԻԶ-ՂԱՐԱՍՍԵՄՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ  
ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՍԳՐՔԻ 221-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 2-ՐԴ ԿԵՏԻ ԵՎ 28-ՐԴ  
ՀՈԳՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ  
ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Քաղ. Երևան**

**23 մարտի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ՝ գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ ԱԺ նախագահի խորհրդական Գ. Մելքոնյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Ռոքերտ Մեդերդիչ-Դարասսեմյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի եւ 28-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Ռ. Մեդերդիչ-Դարասսեմյանի՝ 11.01.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

91 ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ♦ 4(57)2010

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ օրենսգիրք) ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 1998 թվականի հունիսի 17-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի օգոստոսի 7-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

Օրենսգրքի 221-րդ հոդվածը վերնագրված է «Վերաքննիչ դատարանի լիազորությունները», որի 1-ին մասի 2-րդ կետը սահմանում է.

«1. Գործն ըստ էության լուծող դատական ակտի վերաքննության արդյունքում վերաքննիչ դատարանը՝

...

2: ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վերաքննիչ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը: Բեկանված մասով գործն ուղարկվում է համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը: Չբեկանված մասով դատական ակտը մնում է օրինական ուժի մեջ»:

Օրենսգրքի «Գործին մասնակցող անձանց իրավունքները եւ պարտականությունները» վերտառությամբ 28-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է.

«4. Գործին մասնակցող անձինք սուտ բացատրություն կամ սուտ ցուցմունք տալու համար ենթակա են պատասխանատվության՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով»:

2. Քննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեյալին: Դիմելով Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ դիմողը խնդրել է պատասխանող «Սիլվի Շաքար Կոնցեռն» ՓԲԸ-ից որպես վնաս բռնագանձել իր կողմից վճարված գումարները: Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի՝ 19.12.2007թ. վճռով հայցը բավարարվել է մասնակի: Հակընդդեմ հայցի մասով գործի վարույթը կարճվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ 20.03.2008թ. որոշմամբ բեկանվել է քաղաքացիական գործը, հակընդդեմ հայցի մասով ստորադաս դատարանի վճիռը թողնվել է անփոփոխ:

Երեւանի քաղաքացիական դատարանի՝ 27.02.2009թ. վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանն իր՝ 23.04.2009թ. վճռով մերժել է վերաքննիչ բողոքը:

ՀՀ վճռաբեկ դատարանը 08.07.2009թ. որոշում է կայացրել վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին:

3. Դիմողը ՀՀ սահմանադրական դատարանում վիճարկելով օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝ գտնում է, որ այն չի համապատասխանում իրավական որոշակիության պահանջին այն առումով, որ դրանով չի սահմանվում բավարար հստակ ձեւակերպված ընթացակարգ, այն գուրկ է որոշակիությունից, իրավակիրառական պրակտիկայում խառնաշփոթի եւ կամայական դրսեւորումների պատճառ է դառնում:

Օրենսգրքի 28-րդ հոդվածի 4-րդ մասի առումով դիմողը նշում է, որ վերոնշյալ դրույթը խիստ թերի է եւ չի ապահովում նշված հոդվածի կիրառման համար անհրաժեշտ որոշակիությունն այն առումով, որ չի պարունակում դրույթ այն չպահպանելու դեպքում ծագող հետեւանքների վերաբերյալ:

4. Պատասխանողը՝ առարկելով դիմողի փաստարկների դեմ, գտնում է, որ դիմողն օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի առնչությամբ առավելապես անդրադարձել է ընդհանուր իրավասության դատարանների կողմից կոնկրետ գործով կատարված դատավարական գործողություններին եւ կայացրած որոշումներին, իսկ վիճարկվող իրավադրույթի սահմանադրականության խնդրին անդրադարձել է խիստ հպանցիկ՝ ներկայացնելով ընդհանուր բնույթի դատողություններ, առանց կոնկրետ փաստարկներ ներկայացնելու: Ըստ պատասխանողի՝ օրենսգրքի 28-րդ հոդվածի 4-րդ մասի առնչությամբ դիմողն ըստ էության չի վիճարկում նշված հոդվածի սահմանադրականությունը, քանի որ դրա հակասահմանադրականության վերաբերյալ որեւէ փաստարկ չի ներկայացնում: Այս դրույթի վերաբերյալ դիմողի վերլուծություններն ու եզրահանգումները վերաբերում են դրա իրավական նպատակահարմարությանը, սակայն անգամ այս դեպքում ներկայացված փաստարկները դժվար է հիմնավոր համարել:

5. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի եւ 28-րդ հոդվածի 4-րդ մասի հակասահմանադրականության առնչությամբ դիմողն իր դիմումը հիմնավո-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

րում է բացառապես դատարանների կողմից, իր գնահատմամբ, թույլ տրված սխալներով եւ օրենքի խախտումներով՝ որեւէ կերպ չհիմնավորելով վիճարկվող նորմի եւ ՀՀ Սահմանադրության միջեւ առկա որեւէ հակասություն:

Դիմողը՝ ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության եւ կիրառման արդյունքում ընդունված դատական ակտերի օրինականության հարց:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի եւ 28-րդ հոդվածի 4-րդ մասի սահմանադրականության հարցի նկատմամբ կիրառելի է ՀՀ սահմանադրական դատարանի՝ 17.03.2009թ. ՍԴԱՌ-21 որոշմամբ արտահայտած այն իրավական դիրքորոշումը, ըստ որի. «Բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես ՀՀ սահմանադրական դատարանի քննությանը ենթակա հարց չառաջադրող դիմումներ»:

6. ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԴՌ-839 որոշման մեջ դիրքորոշում է հայտնել առ այն, որ. ««Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 4-րդ մասն ամրագրում է վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջը, համաձայն որի՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի օրենքի 68 հոդվածի 7-րդ մասում նշված որեւէ հատկանիշով»:

ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշումներում բազմիցս արձանագրել է, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Սահմանադրական դատարանը կարճում է գործի վարույթը...գործի քննության ցանկացած փուլում, եթե բացահայտվել են սույն օրենքի 32-րդ հոդվածով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքեր»:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ կետի, 60-րդ հոդվածի 1-ին կետի, 69-րդ հոդվածի 1-ին, 4-րդ եւ 7-րդ մասերի պահանջներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

1. «Ռոբերտ Մեղերդիչ-Ղարասսենյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի եւ 28-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**23 մարտի 2010 թվականի  
ՍԳՈ-870**

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության  
20 դեկտեմբերի 1996թ. կոլեգիայի թիվ 37/2-14 որոշմամբ

Խմբագրության հասցեն՝  
Երևան Բաղրամյան 10  
Հեռախոս՝ 58-81-71  
E-mail: armlaw@concourt.am.  
<http://www.concourt.am>.

Ստորագրված է տպագրության՝ 25.11.2010 թ.  
Դասիչ՝ 77754  
Գրաչափը՝ 70x100 1/16  
Տպաքանակը՝ 500

*ՀՀ ՄԳ տեղեկագիրը ՀՀ  
քառօրյա պարզազույն որակավորման  
հանձնաժողովի որոշմամբ ընդգրկված է  
այնպիսի հատկությունների արդյունքների  
տարածման համար ընդունելի  
պարբերականների ցանկում*